

ԵՆՄԵՂ ԶՐՈՅՑՆԵՐ
ՏԱՏՈՒԿ ԹՂԹՍԿԻՑԸ
(Գաւառացու օրագրից)

Ա

Որ ես ալժմ բաղդաւոր եմ, դրա մասին կասկած չունիմ. բայց կըցանկալի որ գուք էլ համոզուիք թէ իրաւ, բաղդաւոր եմ։ Ալդ ապացացանելու համար, կարիք չըլկալ ճառ խօսելու, բաւական է ասել թէ ես թղթակից եմ, և ամեն բան կըհասկացուի։

Բայց հասկանալուց առաջ՝ բնական է որ գուք հետաքրքրուիք իմանալ թէ ինչպէս պատահեց ալդ. ալսինքն որ ես, «առանց պատշաճաւոր պատրաստութեան», դարձայ հայոց թերթի թղթակից։

(Չակերտներում դրուած բառերը ոչ թէ իմ խոստավանութիւնը՝ այլ ձեր կարծիքն է, որի դէմ բողոքում եմ. որովհետև հասարակութիւնն իրաւունք չունի իմ մասնաւոր կեանքը քննելու. իսկ պատրաստութիւն ունենալու, կամ չունենալու խնդիրը, ինչպէս յալտնի է, վերաբերում է զուտ մասնաւոր կեանքին. ինչպէս և իմ կուշտ կամ քաղցած լինելու խնդիրը դարձեալ վերաբերում է դրան)։

Բայց ինչ որ է, ալժմ կըպատմեմ ձեզ թէ ինչպէս պատահեց ալդ։

Մի օր ես միայնակ ճեմում էի մեր պատշգամի վրալ և մտածում այն մասին թէ ինչպէս են անում մարդիկ որ մեծ քաղաքներում հրատարակուաղ թերթերի թղթակից են դառնում։

Խնդիրը լուրջ էր, ես էլ մտածում էի լրջօրէն: Յանկարծ մի սաստիկ ցանկութիւն զգացի թղթակից դառնալու: Զը գիտեմ, Պարնասի մուսաների մէջ կալ արգեօք թղթակցութիւն ներշնչող մուսալ թէ՛ ոչ. եթէ կալ, ապա ինձ թւում է թէ՛ թղթակից դառնալու ալդ յանկարծական ցանկութիւնը հենց նա է ներշնչել ինձ. իսկ եթէ չըկալ, դարձեալ չըպիտի մեղադրէք ինձ: Ո՞վ չէ ձեզանից, գէթ, մի տնդամ իւր կեանքում, ունեցել ալդպիտի անմեղ ցանկութիւն ... խօսքս, ի հարկէ, տգէտների մասին չէ, այլ ինտելիգէնտների:

Հա, այն էի ասում թէ՛ ճեմում էի պատշգամի մրայ... Եւ ահա տեսալ որ լոնկարծ փողոցի մէջ բուսան Տէր Նմաւոնն ու Տէր Սիմօնը և կանգ տռնելով ուղիղ մեր պատշգամի դիմաց՝ սկսան տաք տաք վիճել: Ինձ ալնպէս թուաց թէ՛ վէճը շուտով պիտի փոխուի կրուի, կրիւը՝ հայհոյանքի և հայհոյանքը՝ ծեծի... Ուստի ականջներս սրեցի որ մի բան լսեմ քահանաների վիճաբանութիւնից, բայց, դժբաղդաբար, չը կարողացալ, որովհետև փողոցը հեռի էր և արժանապատիւ հալրերի ձալնը ականջիս չէր հասնում:

Այսուամենայնիւ, պարզ տեսնում էի որ նրանց ձեռքերի, ոտքերի և մանաւանդ գլխի սաստիկ շարժումները հոգեկան ամենագրգռուած դրութիւն են արտալայտում: Հետեւապէս, եթէ գրողի տաղանդ ունենալի, իմ հոգւու ականջներով կըլսէի թէ՛ նրանք ինչ են ասում: Զէ որ մեզանից ամեն մէկը գիտէ թէ՛ բարկացած մարդիկ ինչել կարող են խօսել:

Եւ, ահա, հէնց ալդ վայրկենից, ինձ այնպէս թուաց թէ՛ ալդ տաղանդն ստացայ: Որովհետև, երբ Տէր Նմաւոնը գլուխը երեք անդամ թափահարելով մի քայլ լիտ կանգնեց և ապա՝ ձախ ձեռքը կողքին դրած, իսկ աջով գաւաղանը շարժելով՝ երկու քայլ առաջացաւ, ես հաստատ իմացալ (թէպէտ չըլսեցի) որ նա ընկերոջն ասաց.

— Դուք մի անպիտան արարած ես:

Տէր Սիմօնն, ի հարկէ, տակը շէր մնալու. նա էլ (եթէ միայն ինքնասիրութիւն ունէր), պիտի ասէր.

— Անպիտանը դու ես, որ գանձանակը խորում ես:
Տէր Շմաւոնն այնուհետև պարտաւոր էր անուանել հակառակորդին «անխիղճ ստախօս» իսկ Տէր Սիմօնը նրան՝ «անամօժ ուրացող» և ալսպէս՝ կարգով առաջ գնալով... բնչէք կարծում, վերջն ուր պիտի յանդէր.

— Գաւազանահարութեան:

— Հա, շատ ապրիք. ես էլ հէնց ձեր կարծիքին էի: Եւ այդ պատճառով շունչս բռնածու սրտատրոփ սպասում էի թէ ահա, ուր որ է, մէկի գաւազանը կիջնէ միւսի գլխին, ճակատներից մինը կը պատռուի, աչքերից մինը դուրս կըպիծնի. իսկ արիւնը, լամենայն դէպս, կըծորէ մէկի կամ միւսի երեսից...: Բայց, ցաւելով պիտի ասեմ, արդպիսի բան չը պատահեց և քահանաները, երեկի, միայն հասարակ տեսակի հայհոյանքներ ու անէծքներ տալով միմեանց՝ հեռացան: (Կղերականներն, ասենք, միշտ երկշու են, ալդ ամենքս գիտենք): Ինչ մեղքս ծածկեմ. շատ կոտրուեցայ: Որովհետեւ ինքս տաք խառնուածքի տէր լինելով՝ և մանաւանդ թէ կետնքով ու կրակով լի սիրտ ունենալով՝ չափազանց սիրում եմ վէճ, աղմուկ, կրիւ, հալհոլանք և, նամանաւանդ, հանդիսաւոր գաւազանահարութիւն.— միայն թէ ալդ բաները ինձ չը պատահեն, (ալդ գէպքում, առհասարակ, շատ խաղաղասէր եմ) ալլ պատահի ուրիշներին, ինձանից հեռու մարդկանց, իսկ ես, մեր պատշգամում կտնգնած, հանդիսաւ սրտով դիտեմ ու զուարճանամ: Զեմ սիրում, մինչև անդամ, երբ ինձ վկալ են տանում գատարան. ալդպիսի դէսլքում ես միշտ ասում եմ թէ՝ «ոչինչ չեմ տեսել», որպէս զի ապագալ գլխացաւութիւնից ազատուեմ: Որովհետեւ բանը հօ չէ վերջանում

Հաշտարար դատարանով. Նրանից լետոյ գալիս է նահանգական դատարանը, դատաստանական պալատը, կառավարիչ Սենատը. մինչև այդ տեղերը ող ունի գլուխ թրե գալու: Ա՛յ, ուրիշ բան է լրագիրը. մի լուր հազրդում ես. սուտ թէ ճշմարիտ. հարցնող չը կայ. մարդիկ վրգովում են, իրար վրայ են յարձակում, իրար միս զգգովում, և դու հանգիստ նստած՝ դիտում ես ու ծիծաղում. որանից էլ լաւ րան:

Բայց մենք խնդրից շեղուեցանք:

Հա, այն էի ասում թէ՝ քահանաները հեռացան առանց կուսւելու և այդ հանգամանքը սիրտո շատ կոտրեց. բայց մի փոքր յետոյ, հենց նոյն հանգամանքը մի երջանիկ միտք ծնեցրեց իմ գլխում.—«արի, ասացի, այս գէպքը լուր զինեմ, մի փոքր էլ ծաղկեցնեմ և ուղարկեմ մեր թերթերից մինին, անպատճառ կըտպեն: Եւ եթէ տալեցին, այդ արդէն ասպացոյց է որ ես գրելու տաղանդ ունեմ, ուրեմն և համարձակ կարող եմ իջնել գրական ասպարէզ»:

Ասելս ու գործելս մէկ եղաւ:

Ներս մտայ իսկոյն սենեակ, նստեցի սեղանի առաջ, առայ թուղթ ու գրիչ և շարադրեցի հետեւելը:

«Մեր քաղաքում երկու քահանայ փողոցում միմեանց հետ կոռուցին գաւաղտններով և իրար ջարդեցին»:

Երկու անգամ կարգացի այս տողերը: Առաջին անգամ նրանք դիւր եկան ինձ. բայց լետոյ տեսալ որ խիստ կարճ են. (ես առհասարակ շտու էի օկում երկար գըելը, թէպէտ չէի կարողանում): Ի՞նչ անեմ որ թղթակցութիւնս մի փոքր երկարի, մտածում էի ես: Եւ, ահա, յանկարծ լիշեցի որ հալոց լրագիրները կարդալիս, նրանց մէջ պատահած գեղեցիկ բառերն ու դարձուածները միշտ օրինակում եմ մի առանձին տետրակում, որպէս զի նրանցից գործ ածեմ երբեմն՝ բարե-

գամներիս նամակ գրած միջնցին, և նոյն ժամանակները
մի էր կարծում թէ՝ կը դայ մի օր, երբ ես լրագրի իս
կական թղթակից Ելակը (դառնամ): և Այս գէպը կը կը կը
կարող եմ օգնութ քաղել ժողովածուից մտածեցի. ինքս
ինձ և այսղանի արկղից լիշեալ տետրակը հանելով ընտ-
րեցի նրանից հետեւալները:

1) «Իրենց կոչման բարձրութեան վրայ». 2) ան-
վայելչարաբ»: 3) «զպատկառելի»: 4) «ասկալի» (այս
բառը առ Հասարակ, ես շատ եմ սիրում): 5) «քիթ ու
պոռմնագ»: 6) «մխիթարական կամ անմխիթար երեղիմ»:
7) «քարձր հոգեւոր կառավարութիւն»: 8) «Ռատիկա-
նութեան լուրջ ուշադրութիւնը»: 9) «Հրաւիրում ենք
ուշադրութիւնը» և 10) «գարշապար» (այս էլ իմ սիրած
քառերի թուրին է պատկանում):

Այս տասը ընտիր բառերն ու դարձուածներն առ-
նելով սկսայ լետ ու տոաջ դնել նրանց և լարմարեց-
նել իմ գրուածքին: Երկու ժամուայ անխոնչ պարապ-
մունքից լետ՝ այդ գրուածքն ստացաւ հետեւալ ձեզ.

«Մեր քաղաքի երկու սլատկառելի քահանաներ,
որոնք իրենց կոշման բարձրութեան վրայ չեն կանգ-
նած, փորոցում անվայելչարաք կուեցին միմեանց հետ-
և իրար պիթ ու սլունդ ու գարշապար ջարդեցին:
Հրաւիրում ննք բարձր հոգեւոր կառավարութեան և
ուստիվանութեան լուրջ ուշադրութիւնը այս անմխի-
թար երեւսյթի վրայ»:

Առաջին անգամ որ կարդացի այս լուրը, գրեթէ
Հիացայ: Այսպէս լաւ էր գրուած, այնպէս լաւ, որ կար-
ծես, իսկ և իսկ, լրագրից էր օրինակուած: Միայն թէ՝
գարշապար բառն ինձ մի փոքը տարակուսոնքի մէջ
ձգեց: Դարշապարը գիտէի որ մարմնի մի մասն է,
բայց թէ որ մասը, հարատատ ըլքիտէի. դժբաղդաբար,
բառարան էլ չունէի որ նալեմ, իսկ հանել իմ գրուած-
քից ալդպիսի մի սիրուն բառ, ափսոսում էի:

Ի՞նչ անեմ, ի՞նչ չ'անեմ, մտածեցի ես և վերջը
հետևեալ հնարը դառլ: Միւնոյն աւուր երեկոյեան
գնացի եկեղեցի, (ուր, իբրև յինտեղիգենո մարդ, շատ
հաղիւ էի լինում) և երբ ժամասացութիւնն աւարտուեց,
դուրս եկալ բակ և այդտեղ հանդիպելով մեր քաղաքի
գիտնական, բայց խիստ յետադէմ Տէր-Սեղպոսին, հարցր-
ըի նրան ծիծաղելով.

—Տէր հայր, ի՞նչ կընշանակէ «գարշապար»:

—Նա, ի՞նչ է, Փարմասոն, ուզում ես իմ գիտութիւ-
նը փորձել, հարցըեց քահանան ժպտալով, (նա բոլոր
լրագիր կարդացողներին Փարմասոն էր անուանում):

—Այո, ասացի հեգնօրէն:

—Դէ լաւ, որ այդպէս է, կասեմ. «գարշապար» նշա-
նակում է ճակատ, պատասխանեց քահանան լրջութեամբ.

—Եշմարիտ:

—Այո, ճակատին՝ գրաբար լեզուով ասում են «գար-
շապար»:

Զէք կարող երևակալել թէ՝ որքան ուրախացար,
երբ տեսալ որ սիրածս բառը ամենայարմար տեղն եմ
գործ ածել:

Ես, ի հարկէ, խկոյն հեռացալ Տէր-Սեղպոսից: Եւ
չընալիով որ նա իմ ետևից ինձ անուանեց «ապուշ»,
այսուամենալինիւ ես չըլսելուն դրի, որովհետև պարզ
տեսալ որ նա վիրաւորուեց այն պատճառով՝ որ ես ար-
ժան չըհամարեցի փոխանակել նրա հետ դարձեալ մի-
քանի խօսք, այլ արհամարհելով հեռացալ:

Վերջապէս հասնելով տուն, օրինակեցի իմ շարա-
դրած լուրը և դրի ծրարի մէջ:

Այժմ առաջ եկաւ մի ուրիշ, աւելի ծանրակշիռ
հարց. — արգեօք որ լրագրին գիմեմ. տղատամիտ «Հըն-
ձուորին» թէ պահպանողական «Սալլորդին»: Մտածեցի
երկար, չափեցի, կշռեցի և վերջը եկալ այն որոշման,
թէ՝ ... բայց ոչ, որոշումս ձեզ յալտնելուց առաջ
անհրաժեշտ է մի խորհրդածութիւն:

Արգեօք պատահէլ է ձեղ երբ և իցէ գտնուիլ իմ զրութեան մէջ. ալսինքն այնպիսի դրութեան որ դուք ձեր անձնական մտքերը, հասարակական գաղափարները և քաղաքական հայեացքները աշխարհին լայտնի անելուց, կամ ինչպէս գեղեցիկ լեզուով ասում են—հասարակութեան սեփհականութիւն դրձնելուց առաջ՝ նըստէք և մտածէք թէ՝ «որ ուղղութեան դիմեմ, որ բանակին միանամ...»: Օ՛, մարդուս կեանքի մէջ ուգ ինդրի մասին մտածելու վալրկեանը ամենից փառաւորը և հանդիսաւորն է... Ալդ վալրկեանն է որ քեզ առաջին անգամ զգալ է տալիս թէ՝ դու ազտա մարդ ես և իրաւունք ունիս ինչ կամենաս լինելու. ալսինքն և ազտամիտ և՝ պահպանողական և՝ լետադէմ և, մինչեւ անգամ, կղերական... Եւ իրաւ, ով իրաւունք ունի ասել քեզ թէ՝ «պարօն, ինչո՞ւ ես դու կղերական»: Ալդ-սիսի ապուշին դու ուղղութեան կամ բանակի-պատկանելը ոչ թէ խելքի կամ սոր իմաստութեան գործ է, այլ ազտա կամքի: Երևակալեցէք որ դուք վերարկու չունիք և ձեզ առաջարկում են գնել մէկը չորս վերարկուներից, որոնք բոլորն էլ նոր, գեղեցիկ-փափուկ և վայելուչ են և դուք ձեր սեփհական փողը վճարելով՝ նրանցից մէկը գնում էք: Ո՞վ իրաւունք ունի ձեզ ասել, «պարօն, ինչո՞ւ այս վերարկուն ընտրեցիք և ոչ միւսը»: Զէ որ ընտրութիւնը ճաշակի գործ է և դրա նկատմամբ երբէք չեն վիճում. Եւ ահա դուք ընտրելով այն, որը կամեցել էք, դրանով կատարել էք. ձեր կամքի ու ճաշակի պահանջը: Ընտրութեան միջոցին, ի հարկէ, չէք կարող որոշել թէ եղածներից ո՞րն է փատճ և ո՞րը գիմացկուն. որովհետև ձեր աչքում բոլորն էլ դեռ նոր են: Խսկ փատճն ու դիմացկունք կ'որոշէ ապագան: Ալպէս էլ ուղղութիւնը, բանակը,

կամ կուսակցութիւնը։ Այսօր երիտասարդ լինելով՝ պատրաստում են իջնել գրական աճպարէղ։ գրահամար չարկաւոր է որ ընտրես մի կուտակցութիւն, ինչպէս որ ձմեռը համած ժամանակ՝ վերտրկու չունեցողն ընտրում է մի գերարկու։ Սկզբում, ի հարկէ, դու ուշագրութիւն կըդարձնես արտաքին փալին և մեծահնչիւն անուանը։ իսկ թէ յետոյ ինչ դուրս կդար, այդ արդէն քո բաղդն է, ըլպիտի արտնջաս։

Ազն ճիշդ այս ծտքով գործեցի և ես, երբ հարկ նշաւ որոշել թէ՝ որ լրագրին դիմեմ։ — ըսոլոր աշխարհն, աստցի, առողջ է գնում, ես ինչու յետ մնամ։ Վերջի վարսաւիրան էլ չի ընդունում որ իրեն չ'անուանես յառաջադէմ կամ ազատամիտ, մբթէ կըվալելէ որ ինձ նման ինտելիգենտը չըպատկանի նոյնպէս ազատամիտ։ ների խմբին։

Ալսպիսի գեղեցիկ որոշման գոլով՝ ծրարս փակեցի և ուղարկեցի նրան ազատամիտ «Հնձուորի» խմբագրութեանը։ Եւ որպէս զի աշխատութիւնս անկրուստ հասնէ նրան, ես ծրարը ապահովացրի։ Որովհետեւ մտածեցի թէ՝ կարող է պատահել որ նամակս Թիֆլիս հասնելուց՝ անցնէ արբած մի ցրուչչի ձեռք և ստ փոխանակ «Հնձուորին» յանձնելու, տանէ և տայ պահպանագական «Սալլորդին»։ Աստուած մի արասցէ։ ալդպիսի մի թիւրիմացութեան շնորհիւ ես ուղակի զօհ կըդառնալի իմ լուրջ սկզբունքներին։ այսինքն ստիպուած կըլինէի պահպանողական դառնալու։ Որովհետեւ պարող է, որ ինչ թերթում տպում է մարդու անդրանիկ գրուածքը, այն թերթի ուղղութեանն էլ նա պիտի հետևէ։ Նո չի կարելի սեփհական մտքի ստեղծագործութիւնից հրաժարուել այս ու այն ուղղութեան մի դատարկ տարբերութեան պատճառով։

Ինչ և է, փաստալին մի տւելորդ մարկ ապահովացրեց իմ համոզմունքը և պարզապէս որոշեց իմ ուղղութիւնը։

Սլնուհետեւ ամեն անդամ որ՝ Թիֆլիզից ստացւում
էր «Հնձուողոյ թերթը», ես նեարդային լուզմունքով սկսում
էի նրա մէջ պարտել իմ լուրը, իմ աչքը չէին գալիս
ոչ ալդ թերթի առաջնորդողները, ոչ պրատեհն աեսու-
թիւնը, ոչ բանաօթիրականը... Ես զբաղւում էի միայն
նրա ներքին տեսութեամբ, որովհետեւ իմ «երկը» միայն
ալդանդ կարող էր լինել. Եւ ես պարտում էի... բայց
ինչպէս էի պարտում, սրտատրոփի, շնչասպառ... Ո՞վ
քաղցր վալրկեաններ իմ գրական անդարձ անցեալի...

Եւ ահա, մի օր, բայց ոչ, մի երջանիկ օր, երբ
ալլ ես լուս չունէի թէ՝ կարող եմ իմ «երկը» տպա-
գրուած տեսնել, ստանում եմ «Հնձուողը» և, ըստ սովո-
րականին, նրա ներքին տեսութեանը նախում։ Յան-
կարճ, ովկարմանք, գաւառական լուրերի շարքում տես-
նում եմ տպուած իմ «հաղորդագրութիւնը»... Տպուած
եմ ասում, հասկանում էք: Բայց ոչ, անկարելի է որ հասկա-
նաք, կամ գոնէ ալնպէս հասկանաք, ինչպէս որ ես էի հաս-
կանում... Դրա համար պէտք է օր կարողանաք յուզուել, ո-
վկորուել, տքնութեան ժամեր անցնել, ինչպէս որ ես էի
անցըել, որպէս զի հասկանաք թէ՝ ինչ է նշանակում սեփ-
հական աշխատութիւնը, տպագրուած տեսնել...:

Եւ ես սկսայ կարդալ իմ «աշխատութիւնը» մէկ,
երկու, երեք, չորս, վերջապէս տասն անդամ կարդացիր
և էլլ չէի կշտանում։ Զարմանալի է. որքան էլ որ
թղթի վրայ գրուածը լաւ է թւում գրողին, լրագրե
մէջ տպագրուածը նրանից տասն անդամ աւելի է լաւ
թւում։ Եւ գրա գաղանիքը, ես կարծում եմ, նրանում
է, որ մարդ՝ իւր գրուածը տպագրելուց լետոյ է միայն
համոզում թէ՝ ինքը, արդարեւ, «թղթակից» է։

Եւ այսպէս, մեծ երանութիւն պատճառեց ինձ իմ
անդրանիկ «երկի» տպագրութիւնը։ Ցաւալի էր միայն
որ նրանից հանել էին երկու բառ, առաջինը՝ «ոստի-
կանութիւն» և երկրորդը՝ «գարշապար»։ Ոստիկանու-

թիմը՝ ոչինչ, բայց գարշապար բառի անհետանալը շատ վրդավեց ինձ:

Մէկ մտածեցի թէ՛ վեր կենամ մի նախառական նամակ գրեմ իմբագրութեանը և բացատրութիւն պահանջեմ «թղթակցի» պատուի հետ արդպէս կոպառւթեամբ վարուելուն համար, մէկ էլ ինքս ինձ ասացի. «Ո՞վ գիտէ, ո՞ր անգութ ձեռքն է հանել ալդ բառերը, նոյն իսկ խմբագրի կամքի հակառակ... աւելի լաւ է զուել, ապա թէ ոչ, կարող են մեզ նոյն իսկ քաղաքական լանցաւոր ճանաչել...»:

Եւ այսպէս, ես հաշտուեցի իրողութեան հետ, մը խիթարելով ինձ այն քտղոր մտածութեամբ թէ՛ ես, ուրեմն, «գրող» եմ և կարող եմ այսուհետեւ համարձակ իշնել գրական ասպարէզը և կանգնել այն մարդկանց շարքում, որոնք իրենց անուանում են «թղթակց» — հրապարակախօս»:

Յետու «Ննձուորու-ում տպաւած իմ լուրի շուրջը կարմիր թանաքով մի հաստ ու գեղեցիկ շրջանակ քաշեցի և թերթը կախեցի իմ սեղանի առաջ՝ հանդիպակաց պատին, լուսանցքի վրայ նախապէս գրելով հետեւելը.

Այս է իմ գրական առաջին «երկը», որ լուս տեսաւ 1873 թուականի մայիս 25. ին: Իմ գրական գործունէութեան քսաննինզամնակը լրանում է 1898 թիւ մայիս 25. ին:

Բ.

Ասում են՝ գիպուտծները, շատ անդամ «փոքրիկ» մարդկանց գարձնում են «մեծ»: Եւ ալդ՝ ճիշդ է: Եթէ տէր Նմաւոնի գաւազանը իջած չըլինէր տէր Սիմօնի գլխին, (գրական էտիկէտը պահանջում է որ մի անգամ լալտնածո ճշմարտութեան վրայ պնդեմ մինչեւ վերջը), ես, ի հարկէ, տասօր թղթակից չէի դառնալ

ազատամիտ «Հնձուորին», այն էլ ոչ թէ պատահական,
այլ ըլատուկ:

Ալժմ կը հետաքրքրուէք իմանալ թէ՝ երբ դարձալ
ես յատուկ թղթակից, քանի որ ալդ մասին դեռ ոչինչ
գէք լսած: Պատմեմ համառօտ:

«Հնձուորի» համարը մեր քաղաքում ստացուելուց
մի օր յետոյ գուրս եկալ փողոց՝ իմանալու համար թէ՝
քնչ են խօսում արդեօք լոյս տեսած լուրի մասին: Որ-
քան մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ թեմական
գպրանոցի ծանօթ ուսուցիչներից մինը յայտնեց թէ՝
ալդ լուրը մեծ իրարանցում է ձգել քահանաների մէջ.
իսկ սրբազն առաջնորդը ալնքան է վրդովաւել, որ
հրամակել է գործակալին քննութիւն կատարել և յան-
շաւորները գտնելով խստութեամբ պատժել:

— Հետաքրքրուկան է իմանալ թէ՝ ով է գրել ալդ
լուրը, հարցը ես կեղծ միամտութեամբ:

— Ով որ գրել է, շատ լաւ է գրել, թէպէտ լու-
րը կարճ է, բայց երևում է որ գրողի գրչում թոյն
կար. երկու խօսքով քաղաքն իրար է տուել:

Քիչ էր մնում որ այս գովեստը լսելուց խելքս
թուցնէի և գրկելով վարժապետին՝ բացագանչէի.

— Գրողը ես եմ, ես, պարոն ծանուուեան, ալդ
թունաւոր գրիչն ինձ է պատկանում. ալդ ես եմ, որ
երկու խօսքով քաղաքն իրար եմ տուել:

Այն, ուղում էի այս խօսքերն ասել, բայց, չըգի-
տեմ բնչպէս, քաջութիւն ունեցալ ինձ զսպելու-
եւ հէնց ալդ վալրկեանին մի մեծ գիւտ արի.
ալսինքն, եկալ այն համոզման թէ՝ ինը Մուսաներից
մինը անպատճու ըլուցնողը է: Եւ իրաւ, եթէ բոլոր
միւսերը ոգեսորում են մարդկանց գրելու, խօսելու կամ
երգելու, չէ որ մէկն էլ պիտի լինի, որ խիստ եռան-
գոտների աշխոյթը չափաւորէ՝ գրողի ձեռքը, խօսողի
լեզուն և երգողի ձալնը տկարացնելով: Եւ, իմ կարծի-

քսկ, այդ գլուխնող», Մրգանց ամենից ամենի բնիքելուն, է մարգկանց, որովհետև իւր ներշնչումով արգելք է լինում տնօտեղի տրթիծ ակործամթիւններին: Փրփայքպիսի նմեղծա- զործութիւնները քմնաշատ կարող են լինել թշշվարհում: Եւ ահա, ուրեմն, այդ բարեսիրտ Մաւսալիշնորհիւ ես չըրացո- գանչեցի ժամռուեանի առուջ և չըմատնեցի ինձ:

Բայց նորն առաք երեկոյեան գնացի գեկեղեցի իմա- նմիու համար թէ՝ բնչ հետեւանքքէ ունեցեր զործակա- լի քննութիւնիւ եւ որքան մեծ եղաւ իմայ զարմանքը, երբ իմացալ որը Տէր Նմանոնի ու Տէր Սիմոնի կոմիսարին պատժուել են Տէր Գրիգորն ու Տէր Սահմակը, պարզոց մասին ինչպէս գիտէք, ոչինչ չէի դրան: Իմ հարցին թէ՝ քինչու համար եթ դրանք պատժուել և ոչ աւրիշ- ները, քանի որ լրագրութ պատճ չէ լիշտած, պա- տասխանեցին թէ՝ «Հարց ու փորձից պարզուել է, որ դրանք մի օր կւուել են իրար հետ գերեզման օր հնելիս»: — Ուրեմն ծշմարտութիւնը գնուրն եկաւ թաքստից, կեցցէ լրագիրը, բացագանցեցի եւ:

— Հա, Փարմասպն, չըլինի: Թէ դու ես լուր տուել «Հնաձուորին», իսուեց ենեկցու Տէր Սեղբուր, որ լսել էր իմ բացագանցութիւնը: — Ենչաւ գրելու նոր նիւթ — թղթակցին սլարտում են... մատծեցի ես մաշնայելով ո՞նի ալիք բահանալին արհամարհում էի, իրը և լիտրոդէմ կղեցականի, արտու- ամենալին որոշեցի այս անգամ: չնդի համարհելու մտա- ծելով թէ՝ քննի որ աս ինքը լինդամումէ ոքին կարող եմ լուրեր տալ լրագրին, թնդ ուրեմն ատլապէն էլ ի- մանալ և երկիւղ կը ինձանից: — Հա, դիցուք թէ: ես եմ տուուել, բնչ էք ուղում ասել, հարցըի ես մի առանձին խնառութեամբ: — Այն եմ ուղում տուել, որդի, պատասխանեց նու ձալնը մեղմացնելով, որ եթք մի բան գրում էք, ուղի- ղը գրէք:

ու ինչ որ լրագրութ դրւում է, նայ անպայման ուղիղ է, սովորեցէք, վերջապէս, պատկառիլ տպահ խօսքից, բարկացաւ եւ արդար բարկութեամբ։

Տէր-Սեղբոոր, կարծեմ, երկիւղից կորցրեց իրանա Ու, տիր չեմ պառամ, կակագեց նաև կարծեմ պատժուած քահանաները իրար չեն խփել, ալլ միայն հայշուել են։

«Ահա գրելու երկրորդ, նիւթ իսկութիւնն ուրանում են մտածեցի ես և ապա հարցը եւ

— Եթէ ալդպէս է, գործակալն ինչո՞ւ էր պատժում նրանց։

— Այդ մէկը չըդիտեմ. այ, հէնց նա ինքը գալիս է ալսաեղ. հարցրու, մենք չենք կարժանում նրա հետ ալդպիսի հարցերից խօսել։

— Ինչո՞ւ չէք կարողանում։

— Ի՞նչպէս կարողանանք, գործակալ մարդ է, մէկ էլ տեսար գնաց սրբազնի առաջ մեզ զրպարտեց. նա էլ հրամալեց թէ՝ գնա Տէր Սեղբոսին պատժիր։ Անժամանակ ովկ է, մեզ սլաշտպանում։

— Մենք, գրականութեան մշակներն, բացոված չեցի ես խրոխտաբար և ալդ վարըկենին ինձ թուաց թէ՝ մի տուանձին ոլժ ստացաբ տկարներին անմեղներին ալաշտպանելու համար։

Վերջապէս մօտեցաւ գործակալ քահանան։ Դա մի ագէտ գիւղացի էր. բայց նրեամ պնդութեամբ կարողացել. էր ոչ միայն գիւղից փոխագրուել քաղաք, ալլ և ալդտեղ կարգուել էր գործակալ։

Իմ հարցին թէ՝ ինչո՞ւ պատճել էք Տէր Գլուխորին ու Տէր-Սահակին, նա կոպիտ, գաւառական բարբառով պատասխանեց։

— Ինչպէս թէ՝ ընչք, հէր օրհնած նրանց անիրար առւթէնի համպաւը հասել ա Թիֆլիս. սաղ աշխարհ կրանց վրայ ա խօսում, հմի դու ասըմ ես ընչք պատժել ուստի ա գումար ի մասաբն ու մաքամը զի

— Բայց ինչ են արել նրանք, հարցը ես խստութեամբ։

— Կռուել, հայհուել, իրար ծեծել են, էլ ինչ պտի անեն։

— Իսկ ես լսել եմ որ նրանք կռուել են խօսքով, բայց չեն ծեծել իրար,

— Հա, իմ քննութեան վախտն էլ տըհենց ասեցին, ամա դէ ես պատժեցի։

— Ել ինչո՞ւ էիր պատժում, քանի որ քննութիւնը այդ լուրը չէ արդարացրել։

— Ընդուր որ լրագրումը ապած ա ըլել թէ ծեծել են։ Լրագրի խօսքը թողանք, մարդկանց հաւատանք, տաղած խօսքը սուտ կլի։

Գործակալի այս պատասխանը շատ դիւր եկաւ ինձ։ Զնայելսվ իւր արտաքին կոպտութեան, երևաց որ բաւական լուսամիտ է նա, որովհետև ճանաչում էր տըպագրած խօսքի արժանիքը։

— Կեցցես, տէր-հալր, մինչև ալսօր ես նախապաշտուած էի քո վերաբերմամբ։ բայց ալժմ արդէն տեսալ որ արժանաւոր գործիչ ես, ասացի ես։

Խրախուսուելով իմ գովեստից, գործակալը լայտնեց մի խելօք միտք, որ ինձ վրայ խոր տպաւորութիւն արաւ։

— Առուր ասած բանը նման ա ձիւնի կլոնդրակի (գնդակի), որ էրեխանները գնդելով գցում են ձիւնի վրալ։ Եղոյ սկսում են թոլ տալ (գլորել)։ Որքան շատ ա թոլ ըլում էդ կլոնդրակը, էնքան էլ ձիւնը վրան աւելանում ա հու եղնուց եղը էնքան մեծանում, որ էլ էրեխանները կարում չեն աեղից ժաժ տալ։ Ուրեմն, եղրակացրեց գործակալը, մարդիկ չըպէտք ա ձիւնը գնդեն, ալսինքն ամենափոքը անկարգութիւն էլ ա անեն, չուն էդ անկարգութեան լուրը ըստեղից մինչև Քիֆլիս հասնելը տասն անգամ պտի մեծանալ, ոնց որ բնական ա։ Մեղաւորն էլ պէտք ա պատժուի ոչ

թէ էն չափով որ մեղք ա զործել, ալ էն չափով, որ
չքուած ա լրագրումը:

— Բայր Տէր-Հայր, ձիւնի գունդը ուրիշ բան է,
չոր լուրն՝ ուրիշ բան, ձիւնը գլորուելով կը մեծանալ,
դա բնական է, բայց լուրը պիտի տեղ հասնէ ճշդու-
թեամբ, առանց մեծանալու, կամ փոքրանալու, նկա-
տեց գործակալին մի նորընծալ քահանալ, որ, կարծեմ,
պահպանողականներից էր:

— Սխալում ես, որդի, պատասխանեց գործակա-
լը, ճանապարհ գնալուց՝ լուրն էլ ընենց մեծանում ա
ռնց որ ձիւնի կլոնդրակը, ալ, մի օրինակ պատմեմ,
լսիր: Օղորմած հոգի Դէր (Տէր) Պուղին մեր գեղի պա-
տուական քահանաներից մինն էր: Մի առաւօտ զարթ-
նելով՝ կնկանը ասում ա — Դէրակին, էս գիշեր էրա-
գումս էնքան տանջուեցի, էնքան չարչարուեցի որ ուզումի
մեռնեմ: — Խի, ա դէր, հարցնում ա կնիկը — Ընդուր
որ, մի ագռաւ ծնեցի, ասում ա դէրը: — Բա քու տունը
չը քանդուի, ըղենց էլ բան կլի, արմանում ա կնիկը,
հու ձեռաց վազում իրանց հարևան Օհանի կնկանը ա-
սում — աղջի, Սարէթ, չես ասիլ, մեր դէրը էս գիշեր
էրկու ագռաւ ա ծնել: — Վայ, քոռանամ, էդ ինչ ես
ասում, ծնկներին տալիս ա Սարէթը, հու ինքն էլ վա-
զում իրա հարևանի մօտ ասում: — աղջի, Սարումի թո-
ռը, ախար դէր-Պուղին էս գիշեր իրեք ագռաւ ա ծնել:
— Էդ ինչ զուլում (պատիժ) ա, ա կնիկ, ասում ա Սա-
րումի թոռը. հու վազ տալի իրա տալի տունը՝ — Սօ-
փի, Սօփի, ասում ա, արմացք բան ասեմ. դէր Պուղին
էս գիշեր չորս ագռաւ ա ծնել:

«Ի՞նչ գլուխներդ ցաւացնեմ, բանը որ հասնում ա
քէօխվին, դէր-Պուղին օխտը ագռաւ ա ծնած ըլում:
Քէօխվան, ի հարկէ, իրա գեղի խէր ու շառին հոգա-
տար մարդ, հաւաքում ա գեղականը հու գալիս դէր-
Պուղու մօտ»:

— Ա. գէր; Էս ի՞նչ զուլում ա հասել մեր զեղին՝
էդ խի օխտը ագռաւ ես ծնել, հարցնում ա նրան։
Խեղճ գէր-Պուղին մնում ա շուարած։

— Էդ ով ասեց, քէօխվալ, հարցնում ա նրան։
— Ո՞նց թէ ով ասեց, սաղ գեղը դրնգում ա (թնդում
է), պատասխանում է քէօխվէն։ Յանկարծ գէրի միտն ա
գալիս իրա երազը, կանչում ա կնգանը հարցնում։

— Դէրակին, էս ագռաւի բանը քեզ եմ ասել։ Էս
էլ ասել եմ թէ՝ մի ագռաւ եմ ծնել. հմի էս խի էլ
լիկը (հաստակութիւնը) ասում ա օխտն եմ ծնել։
— Ի՞նչ գիտպմ, ես Յշանի կնկան էրկուսն եմ ա-
սել, պատասխանում ա գէրակինը։

— Բա խի ես էրկուսն ասել։
— Ընդուր որ մտածեցի թէ՝ մին ագռաւ որ ծնել
ա, հալբաժ (երևի) մի ճուտ էլ հետը կլէր։

— Ալ Յհանի կնիկ, դու ինչ ես ասել, հարցնում
են նրան։

— Ես էլ ասել եմ իրեքն ա ծնել։
— Բա խի։

— Չուն մտածեցի թէ, էրկու ագռաւ որ ծնել ա, հալ-
բաժ նրանց էլ մի ջուտ կլէր։ Եւ ըսենց պատասխանում են-
քոլորը։ Բանն, ի հարկէ, պարզւում ա, բայց էդ օրից
դէնը, խեղճ քահանի տնունը մնում ա «օխտը ագռաւ-
ծնող Դէր-Պուղի»։

«Հմի, ա գէր, գարձաւ գարձակալը նորընծալին,
գու ասըմես լուրը մեծանալ չի։ Էս հլա փոքը դիւ-
ղումն ա որ մին ագռաւը օխտն ա դառնում, բա լու-
րը որ ըստեղից Թիֆլիս գնալ, տես քանի անդամ պտի-
մեծանալ է...»

Գործակալի պատմութիւնը համողիչ ազդեցութիւն
արաւ լսողների վրայ, իսկ ինձ, առանձնապէս, հիաց-
րեց։ Ալդ պատճառով ձեռքն պարզելով նրան՝ ասացի-
— Յալտանում եմ ձեզ իմ անկեղծ համակրութիւնը».

քանի որ դուք էլ մեր բանակից էք, ուրեմն գործենք
միասին:

Դործակալը, կարծես, ասածներս չըհանկանալով,
քաշուելով հարցրեց.

— Զեր պաշտօնն ինչ ա.

— Իմ պաշտօնը... ալդ թող ուրիշներն ասեն, պա-
տասխանեցի ես ժամանակով և համեստութեամբ հեռա-
ցալ:

Բայց որովհետեւ քայլերս արագ չէի փոխում, ուս-
տի լսեցի որ տէր Սեղբասը մի առանձին ակնածու-
թեամբ ասում էր.

— Ա.ըւեկիկի թղթակիցն է, լուրն էլ դա է հաղոր-
դել:

Տէր Սեղբասը մի զարմացական բացադանչութիւն
ալուս և, կարծեմ, աեղն ու տեղը սառեց:

Հա, դուք կամենում էիք իմանալ թէ՝ ինչպէս
դարձալ ես «յատուկ» թղթակից, բայց ես միշ-
ջանկեալ պատմութիւն արի. հոգ չէ. ալդ էլ հարկա-
ւոր էր, ալժմ կը դառնամ բուն խնդրին:

Վերադասնալով տուն, նախ՝ ոկսալ մտածել ալն
մասին թէ՝ ինչ լաւ բան է շփումն սւնենալ հասարա-
կական գործիչների հետ, կարծեքներ լսել, մտքեր փո-
խանակել, կամ չըգիտեցածը սովորել:

Առաջին գրական երկս «Հնձուորին» դրկելու ժա-
մանակ՝ խոստվանում եմ, երկու թէ երեք վայրկեան
խղճի խալթ ունեցալ, որովհետեւ մտածեցի թէ՝ «ար-
դեօք լաւ եմ անում որ չեղած բանը գրում եմ թէ
ոչ»: Ասենք դա սկի խղճի խալթ էլ չէր, ալ լոկ ան-
փորձութեան երկիւղ: Խոկ ալժմ, հալր գործակալի բե-
րած օրինակները լսելուց լետոյ՝ այնպիսի մի անլողլողի
քաջութիւն եկաւ վրաս որ կարծես պատրաստ էի աշ-

խարհը գլխի վրայ շուռ տալու, եղածը՝ չեզած, սպի-
տակը՝ մե, փոքրը՝ մեծ, կարճը՝ երկար, հաստը՝ բա-
րակ, մի խօսքով, աներևոլթը՝ երևոլթական դարձնե-
լու, միայն թէ կարողանալի շարունակ գրել և արդպի-
սով ծառալել գրականութեանը: Օ՛, ինչ ոգևորութիւն-
էր այս, և ինչ չէ կարող անել մարդ յափշտակութեան-
արդպիսի վայրկեաններում....:

Եւ ես սկսալ գրել: Բայց ինչ էք կարծում, ինչ...
Մի որևէ լուր. երբէք: Այս անգամուալ ոգևորութիւնը
լուրի ոգեմորութիւն չէր, այլ մի ամբողջ թղթակցու-
թեան, մի թղթակցութեան, որ գրական աշխարհը յու-
ղէր. կրքերը վառէր, մտքերը բորբոքէր... Այն, և ես
սկսալ գրել, «չ, շարագրել այդ թղթակցութիւնը: Եւ
շարագրում էի, ինչ էք կարծում, քանի օր. — ուղիղ
տասներկու, առաւտակից սկսած մինչև երեկոյ: Առաջին
երկու օրը զբաղուած էի միայն իմ տետրակից բառեր
ու ու ոճեր քաղելով: Յետոյ կարգի բերի այն հարցե-
րը, որոնց մասին պէտք է գրէի: Ապա սկսալ իսկական
շարագրութիւնը, որ ինձանից խլեց ուղիղ հինգ օր. յե-
տոյ շարագրութեանս մէջ զետեղեցի իմ ընտրած բա-
ռերն ու ոճերը. վերջը արտագրեցի, օրինակեցի, միսոյ
բանիւ գուրս եկաւ մի հսկայական աշխատութիւն: Եւ
ուրիշ կերպ էլ չէր կարելի. երբ մարդ մի լուրջ բան է-
գրում, պէտք է լրջօրէն էլ պարապէ, քննէ, հետազո-
տէ, ուսումնասիրէ....:

Որովհետև այդ թղթակցութիւնը ամբողջապէս ա-
ռաջ բերել չէմ կարող, ուստի համառօտ յիշեմ թէ ինչ
խնդիրներ էի շօշափել դրա մէջ:

Սկզբում յարձակուեցի այն բոլոր ստոր արարած-
ների վրայ, որոնք սկսել էին որոննել յուր հաղորդող
թղթակցին, ինչպէս օրինակ Տէր-Սեղբոսը և նրա նը-
մանները: Այս պարբերութեան համար յատկապէս իմ
ոճերի տետրակից արտադրել էի հետեւալ գեղեցիկ խօս-

քերը. — «Պարոններ, ի զուր էք որոնում, [կամ հալածում թղթակիցներին. նրանք յանցաւոր չեն որ գրում են ճշմարտութիւնը. իսկ ճշմարտութիւնը մի հայելի է, որի մէջ ցոլսնում է ձեր պատկերը. հայելին մեղաւոր չէ որ այդ պատկերը նրա մէջ երևում է տղեգև և զգուելի»:

Այս կտորը ալնքան գեղեցիկ էր որ ես հինգ անգամ իրար վրայ կարդացի:

Յետոյ սկսալ խօսել «մտրակողական» ուղղութեան մասին անուանելով նրան «Ժողովրդի փրկութիւն», եւ այդ անունը արդարացնելով համար՝ առաջ բերի այն հզօր աղդեցութիւնը, որ արել էր «Հնձուրը», հրապարակ հանելով քահանաների տղեղ արարքը: «Նոյն իսկ կղերականութիւնը չըկարողացաւ անտարբեր մնալաւ. այդ մերկացումի տռաջ և ստիպուած էր պատժել յանցաւորներին» տառմ էի ես:

Այս առիթով, սակայն, ես յարձակուեցի, սրբազնի վրայ, անուանելով նրան անարդար և կողմնազահ, որովհետեւ իսկական յանցաւորներին թողած, նա պատժել էր բոլորովին անմեղ մարդկանց (այս մէկն հօ հաստատ գիտէի). և այդ արել էր, տառմ էի, այն պատճառով որ պատժուողները սրբազնի լետադէմ ուղղութեան կուսակից չէին: (Այս մասին թէպէտ խօսք չէր եղել իմ ու Տէր-Սեղբոսի մէջ, այսուամենալիւ ես պիտի գրէի, որովհետեւ իբրև թղթակից պարտաւոր էի կտտարուած իրողութեան իսկական պատճառները հետազօտել, գտնել)....

Զբիօսելով այլ ևս միւս հարցերի մասին, այսքանը միայն կասեմ որ թղթակցութիւնս այնքան գեղեցիկ էր դուրս եկել, որ նա, մինչև անդամ, նմանում էր իսկական թղթակցութեան: Նենց այս պատճառով էլ սիրտ արի նրա վերջում աւելացնելու իմ անձի վերաբերմամբ հետևեալ տողերը.

ՅՅաւ ՅՅանձն սունելով՝ թղթակցի պատմսխանառու գրնչ:
Խոնը մինք նպատակ տւնինք՝ դրտնով ճականվել հասան
ըսկութեան իսկական շահերին։ Մեր պարագայ կըլինք
սպաշտավոնել ամեն մի դէպքում արդարութիւնը, ճշշ
մարտութիւնը, չեղեցիկն և բարին, իսկ իրաւունքը
հալածել ու հարուածել անարդարութիւնը, ունտը ուը
գեղը և զգութիւնն ունեմք մոռը պատաժ առնելով

Այս ամենից իւտոյ առաջ էր գալիս՝ ստորագրուէ
թեան փնդիրը։ Եթէ իմ գրածնէրի տակ դնի միշտ իմ
անունն ու աղբանունը, որ էր Յօվուէլ Սւետիսեան։ Օւ
հանեպնց, դու ջատ երկար կըլինէր և, բացի այդ, ես
կարող էի լաճակի ենթարկուել լարձակումների, կամ
հրաւիրուել դատարանն (ԶԵ որ իբրւ իմ կոչման հա-
ւատարիմ թղթակից՝ ես չէի կարող միշտ ճշմարտու-
թիւններ դրել, մի տեղ որ ուղղութիւն կայ, բանսկ
կայ, կուսակցութեան շահեր կան, միթէ կարելի է միշտ
ճշմարտութիւն խօսել)։ Այդ պատճառով էլ որոշեցի
ընտրել մի կեղծ անուն Բայց թուելով մի քանի տաս-
նեակ բառեր, օրինակ՝ Բէկզբուզ, Որոմնացան, Ստե-
տարամետ, Մարակահար, Յառաջտէմ և այլն, տեսի
որ գրանք բոլորն էլ թէպէտ գեղեցիկ, բայց երկար
բառեր են։ Ես կամենում էի կարճը և քաղցրահնչեւ-
նը, Արի իմ անուան, հօրանուան և ազգանուան դըլ՝
խտամերն իրար մօտ գնեմ և տեսնեմ ինչ գուրս կը-
գար, մտածեցի ես, և այդպէս էլ արի, գուրս եկաս
ՅԱԿ, որ ոչինչ չէր նշանակում։ Բայց որովհետեւ պա-
պիս անունն էլ կարապետ էր, ուստի երբ նրա զվա-
տառն էլ մէջը դըլ, զարձաւ ՅԱԿ, ի՞նչ գեղեցիկ ու
հրաշալի բառ, բացականչեցի ես և տիդ տնունով էլ
թղթակցութիւնս կնքելով ուղարկեցի Հնձուորին։
Անցաւ տասն օր Տասը գծուարատար, յուսով,
ցնողքով և բալզմունքով մի օրեր... Անցուցել էք դուք
երբ և իցէ այդպիսի օրեր... ի հարկէ ոչ, Ալդ ծանր

թենքն, քաղցր և դառն, միշտ տանջող և միշտ հաճախ օրերը միան մեզ՝ գրականութիւն մշակներիս են պիճակսւած... Այս, զրել, ստեղծագործել և սպասել որ տյդ ստեղծագործութիւնը լոյս տեսնէ, մտքեր ու սըրտեր լու զէ, կարծիքներ ծնեցնէ, վէճեր լարուցանէ և ստեղծագործողի անունը փառաւարէ կամ... խալտառակչէ Վերջին բառն, ի հարկէ, ինձ չէ վերաբերում. բայց լինում են, նաև, այդպիսի դժբաղդներ, Մուսաներից ատուած մարդիկ, որոնք գրում, կամ, իրենց կարծիքով, ստեղծագործում են և վերջը խալտառակւում: Բայց թողնենք այդ դժբաղդներին:

Տասն օր անցաւ: Ստացուող «Հնձուոր» ներում չէր երևում իմ թղթակցութիւնը. սկսւմ էի լուսահատուել... Հեշտ բան չըկարծէք նստել. 12 օր, գրել, շարադրել, միւնոյն բանը տասն անգամ օրինակել և վերջը նրա տպագրութիւնը չըտեսնել... 0՝, դա զարհուրելի է...: Բայց, ինչպէս երևում է, ինձ ոգևորող Մուսան հսկում է եղել թղթակցութեանու: Տասն և մէկ. երրորդ օրը, այն, ճիշդ արդ օրը... բայց ոչ, նկարագրեմ թէ՛ ինչ օր էր այդ. - Պայծառ և գեղեցիկ. արևն առաւօտը ծագել էր, իսկ երեկոյեան պէտք է մալր մտնէր. յետոյ լուսինը պիտի ծագէր. մարդիկ և անասուններ եռանդով գործում էին. թռչունները երգում. բոյսերը բնում և ծաղիկները ծաղկում... գրանից կարող էք երևակալիել թէ՛ ինչ հրաշալի օր էր այն: Եւ ահտ, այդ հրաշալի օրը ստացայ «Հնձուորի» մի համար: Տենդալին լուզմունքից գողացող ձեռքերով բացի թերթը: Առաջին երեսում ոչինչ չըկար. իսկ երկրորդում... Տէր Սստուած. միթէ ճշմարիտ էր. աչքերիս չէի ուզում հաւատալ... Այդտեղ, այդ երկրորդ երեսում տպուած էր, բայց ոչ, լոյս էր տեսած, կտմ աւելի ճիշդ ասած՝ հրատարակուած էր իմ թղթակցութիւնը...: Առաջին անգամ, որ աչքս լնկաւ ՅԱԿՕՒ վրայ, քէչ էր մնում որ ուրախու-

թիւնից խելադարուէի. ուրեմն դա երազ չէր և ոչ է ցնորք։ Ալո՞ւ, դա իմ թղթակցութիւնն էր՝ տպուած հայոց ազգի պարծանք «Հնձւորում»։ Եւ ես սկսալ կարդալ Բայց, ով զարմանք. ուրախութիւնն այնքան էր շշմեցրել ինձ որ ամենից կարեորը, իմ ներկան ու ապագան փառաւորով գեռ չէի տեսելու իմ լոդուածի սկզբում, «Նամակ խմբագրութեան» վերնագրի տակ, փակագծի մէջ, նօտր գրերով տպուած էր՝ «Յատուկ թղթակցից»... Հասկանում էք, յատուկ թղթակցից. ուրեմն ես, Աւետիս Դաւթեան Օհաննեանց, կամ ըստ նոր անուանակոչութեան ՅԱԿՕ ս «Հնձւորի» յատուկի, կամ որ նոյն է ասել՝ «պաշտօնական» թղթակցին էիս Եւ այս պատուաբեր կոչումը ոչ մի մահկանացու չէր կարող ալլ ևս խլել ինձանից. որովհետև դա արդէն հաստատուած, սրբագրուած էր տպագրած տառերով ճշմարտութեան պաշտպան և ընդհանուր աշխարհին յայտնի «Հնձւոր» լրագրում... Ընդհանուր աշխարհին յայտնի եմ ասում, որովհետև նրա ճակատին պարզ գրած էր թէ՝ «Յատասահմանից գիմում են մեզ հետևեալ հասցէով. Tiflis, Rédaction «Հինձնօր»։ կընշանակէ արտասահմանում նա յայտնի էր ամենքին։ Ալդ պիւով, ուրեմն, ես էլ դառնում էի աշխարհահոչակ, իմ անունն էլ այսուհետև պիտի կտրդացուէր ոչ միայն Կովկասում ու Ռուսաստանում, ալլ և Եւրոպայում, Ամերիկայում, Աֆրիկայում և Ասսրալիայում...»

Վերջապէս տրսպիսի յուղումների և հոգեկան ամենաքաղցր գրգիռների ազգեցութեան տակ՝ ես կարդացի իմ թղթակցութիւնը. մի քանի անգամ, հիացալ, յափշտակուեցի և ապա «Հնձւորը» սրտագին համբուրելով՝ գուրս եկալ տանից։

Հասած լինելով արդէն ալսպիսի բարձր աստիճանի, ես, ի հարկէ, պիտի աշխատէի ալնուհետև հեռու պահել ինձ հասարակ ամբոխից և գտնուել մշտապէտ։

որոշ բարձրութեան վրայ: Բայց մինչև ալդ՝ դեռ հարկաւոր էր իմանալ թէ՝ Բնչ ընդունելութիւն է գտել իմ յօդուածը քաղաքի մէջ, կամ Բնչ աղդեցութիւն է արել նա ընթերցող հասարակութեան վրայ:

Այն վայրկենին՝ որ ոտքս դրի քաղաքի հրապարակում, ինձ այնպէս թուաց թէ՝ բոլոր մարդիկ աչքեր նին սևեռեցին ինձ վրալ, իսկ շատերը նրանցից յարգանքով բարեւեցին: Ես, ի հարկէ, չընալեցի ոչ ոքին և աւտաշ էի գնում հոստատուն քալերով ու գյափուկ թղթակցին: Վայել լրջութեամբ:

Օրը տօն լինելով՝ դպրանոցի վարժապետական խումբն ևս ալդտեղ էր: Ես, ի հարկէ, միայն դրանց կարող էի մօտենալ, իրեւ փոքր ի շատէ ինտելիգէնտ մարդկանց: Իմ ողջունին ամենքը պատասխանեցին սիրով և քաղաքավարութեամբ: Իսկ իմ հարցին թէ՝ ինչ նոր լուր կալ, ճաճուռեանն ասաց.

— Լուր չէ, այլ մի ամբողջ պատմութիւն... «Հընձւորի» արստեղի թղթակիցը գլխի վրալ է դրել ամբողջ քաղաքը:

— Ի՞նչպէս, Բնչ է գըել, հարցը ես կեղծ անգիտութեամբ:

— Օ՛, պէտք է կսրդաք, բառերով պատմել անկարելի է:

— Ալսու ամենայնիւ:

— Ասում եմ անկարելի է. էլ թղթակից պտըողներ, էլ առաջնորդ, էլ քահանալ, էլ կուսակցական անարդարութիւն և ալին և ալին չէ մնացել, բոլորը հրապարակ են հանուած:

— Եւ լաւ է գրուած:

— Փառաւոր. «Կատուկ թղթակցի» գործ է.

— Ուրախ եմ որ հաւանում էք ասացի ես ժամանակակից ճաճուռեանն իսկոյն բռնեց ձեռքս և քաշելով ինձ մի կողմ, լուցուած ձայնով հարցըց.

— Միթէ դուք եք դրողը:
Ես զարմացալ նրա նուրբ հոգեբան ոկան ընդու-
նակութեան վրար

— Խնչու համար եք ալդպէս կարծում, հարցը ժամալով:

— Օ՛, մի ծածկէք, խնդրում եմ, լայտնեցէք ինձ
ճշմարտութիւնը. ես գաղտնապահ կը լինիմ ալնպէս,
ինչպէս գերեզմանի քարը, որ ոչ ոքին չէ ասում թէ՝
ովէ իւր տակ պոռկուծ:

— Սո... կամաց խօսեցէք, ի սէր Աստուծոյ, զգու-
շացը ես:

— Ուրեմն, սիրելի բարեկամ, ալդ դուք եք. դուք...

— Այո՞, ինչո՞ւ ծածկեմ լաւ բարեկամից... բայց,
խնդրում եմ, թող ոչ ոք այլ ևս չիմանալ ալդ:

— Բայց ախար դուք... ներողութիւն...

Ինձ թւում էր թէ՝ նա կամենում էր ասել՝ «ախար
դուք ալդքան մտաւոր պատրաստութիւն չունիք». բայց
իմ աչքերի խիստ հայեցքը զգաստացրեց նրան, ուս-
տի խօսքը փոխելով հարցը:

— Բայց ախար ալդ ինչ անուն է, որ ընտրել էք:

— Ցովսէփ Աւետիսեան-Կարապետեան Օհանեանցի
գլխատաւերը միացրէք և դա կլինի...

Ճաճուռեանը մի փոքր մտածեց և ապա լանկարծ
քացագանչեց.

— ՅԱԿՕ,

Բայց հենց ալդ բառն էր, որ կարողացաւ արտա-
տանել և առաջ ամօթից շառագունեց. Որովհետեւ զգաց
որ մեծ անքաղաքավարութիւն է արել՝ կասկած լալտ-
նելով իմ մտաւոր պատրաստութեան մասին:

— Ներողութիւն, սիրելի պարոն ՅԱԿՕ, եթէ ես
վիրաւորեցի ձեզ, ասաց նա անկեղծ զղջումով:

Յակօ անունս առաջին անգամ լսելով կենդանի
բարբառով խօսողից, այնպիսի մի քաղցը հաճուք զգա-

ցի որ իսկոյն էլ ասացի ծաճուռեանին կատարեալ ներողամտութեամբ։

— Անհօգ կացէք, բարեկամ, ալսուհետեւ ալլ ևս ես սրտիս չեմ առնիլ ոչ մի վիրաւորանք, Միանգամ որ հրապարակախօսութիւնը ընտրել եմ իմ գործունէութեան ասպարէզ, ես ալիտի աշխատեմ սովորել համբերութեան։ Ես պատրաստ պիտի լինիմ թէ վիրաւորանքի և թէ հալածանքի. ալգ դէպում, անշուշտ, ինձ կըմխիթարեն և կ'ոգեսորեն մեծ հրապարակախօսների օրինակները։

— Անշուշտ, անշուշտ, պատասխանեց ծաճուռեանը խորին ակնածութեամբ։

Ես կրկին զգուշացրի նրան՝ ոչ ոքի չըլալտնել Յակօ-ի ով լինելը և հեռացար։

Բայց, բարեբաղդաբար, ոչինչ է ծաճուկ որ ոչ յալտնեցի։ ծաճուռեանն ալգ մասին յալտնել էր Մոճուռեանին, Մոճուռեանը՝ Զանչուրեանին, Զանչուրեանը՝ Զունդուրեանին և ալդպիսով մի շաբաթից յետու արդէն ըուրոր քաղաքը գիտէր որ ես եմ Յակօ՞ն, զատուկ թղթակիցն ազատումիտ «Հնձւորի»։

¶

Ալժմ ալլ ևս աւելորդ է թուել թէ՝ ինչ նիւթերի մասին եմ գրել ես իմ երկրորդ, երրորդ, չորրորդ ևն ևն նամակներում։ Ալդ երջանիկ օրերից սկսած մինչև ալսօր անցել են շատ տարիներ և ալդքան ժամանակու ընթացքում «Հնձւ ըում» հրատարակուած իմ թղթակցութիւնների մէջ՝ ես շօշափել եմ հարիւրաւոր ու հազարաւոր հարցեր։ Ալդ ամենի մասին լիշել անկարելի է։ Ալքանը միայն կասեմ՝ որ իմ հրապարակախօսական գործունէութեան ընթացքում՝ հետեւել եմ միշտ մի ազնիւ սկզբունքի, ալն է՝ խօսել ու գրել ճշմարտութիւնը և միայն ճշմարտութիւնը։ Բայց, ի հարկէ, ոչ

այնպէս, ինչպէս որ նա կալ՝ (այդպէս կարդղ է անել ամեն մի տիրացու), այլ այնպէս, ինչպէս որ պիտի լինի. Որովհետեւ այդ է պահանջում կուսակցական ճըշմարտասիրութեան էտիկան, որն ուսումնասիրել և իւրացրել եմ՝ շարունակ «Հնձւորի» գոհարները կարգալով և նրա ուղղակից վերլուծելով:

Այս իսկ պատճառով ամեն մի թղթակցութիւն շաքարելիս՝ աչքի առաջ եմ ունեցել հայր գործակալի «ձիւնի կլոնդրակը», և «օխտը ագռաւ ծնող Տէր-Պուղու» պատմութիւնը: «Իրանք, այն, եղել են ինձ համար լուսառու փարոսներ իմ հրապարակախօսական նաւի լորձանուտ ճանապարհի վրայ և դրանց եմ պարտական գրական սապարիղում ձեռք բերած իմ յաջողութիւնն ու հոչակը:

«Յատուկ թղթակցի» գործունէութեան ասպարէզը — մանաւանդ այն թղթակցի, որ կոչումն ունի ազատ, մարակող և մերկացնող ուղղութեան հետեւելու, շափազանց ընդարձակ է և շնորհակալու: Գաւառի մէջ, մանաւանդ, այդ կոչման հետ կապուած են որոշ իրաւունքներ, որոնցից թղթակցը կարող է օգտուել բնչափէս և բնչ չափով որ կամենար Բաւական է որ նա իւր ձեռքին ունի մի գրօշակ, որի վրայ գրուած են հետեւալ վեհ խօսքերը. «ազատամտութիւն», «նոր և թարմ հստանք», «հարուածել և մարակել», «կորչի խաւարը և յետադիմութիւնը». «ատում ենք կղերականներին», «ով որ մեղ հետ չէ, մեր գէմ է»: Այլ և մի բառան որ իւր մէջ ունենալ 500-ից մինչև 1000, կամ առառաւելին՝ 2000 ընտիր, բայց, մի և նոյն ժամանակ, ազդու հայութանքներ, համեմուած յարձակողական և մտրակողական գարձուածներով, որոնք որչափ յանդուգն լինին ու սանձարձակ, այնքան աւելի լաւ, որովհետեւ, ինչպէս գիտէք, քացախի թունդն է լինում յարգի:

Եւ ահա այդ գեղեցիկ ուժերով զինուած, գուք մըտնում էք... բայց ոչ, ալսուեղ մի փոքր պիտի շեղուեմ:

Հայոց ազգը հօ գիտեք ինչ աղք էս Երևելի աղք է. ամեն բան ունի. Ամենից առաջ ունի մի ազգալին եկեղեցի, որ թէպէտ մի փոքր լեռադէմ է, բայց վնաս չունի, ՅԱ Չատ հին է. Նրա գոլութիւնն ասում են Քրիստոսից շատ առաջ է. հիմնուած է, չըգիտեմ, Բագ-ը ասունեաց որ թագաւորի ժամանակ: Թուականը չեմ լիշում: Ես, առհասարակ ալդպիսի սխոլաստիքական խնդիրներով չեմ զբաղւում: Ճշմարիտն ասած՝ նոր սերունդին չի էլ սազում վատնել ժամանակն ալդպիսի գատարկ բաների վրայ: Այսքանը միայն գիտեմ որ նո շատ հին է և, ինչպէս «Հնձւորն» էլ ասում է՝ ունի ժողովրդական ոգի, որի պատճառով էլ կատարում է ժողովրդական ընտրութիւններ, ինչպէս օրինակ, քահանայի, երէցիսխանի, հաշուատեսի, պատգամաւորի են:

Հայոց ազգը ունի, նա և, հոգևոր գպրացներ, որոց մէջ գասախօսում են վարժապետներ. իսկ վարժապետներին ընտրում է տեսուչը, տեսչին՝ հոգաբարձուները, հոգաբարձուներին՝ ժողովուրդը, իսկ ժողովրդին՝... Հա, ներողութիւն, դէնը ճանապարհ չըկալ:

Հայոց ազգը ունի հոգևոր ատեաններ, որոնք կառավարում են անդամներով, իսկ անդամներին՝ կառավարում է առաջնորդը, առաջնորդին՝ կաթուղիկոսը, կաթուղիկոսին... Այստեղ էլ, կարծեմ, ճանապարհը փակ է, բայց սազում է որ ասէի՝ «իսկ կաթուղիկոսին՝ ժողովարկը»:

Վերջապէս հայոց ազգը ունի բարեգործական ըն-կերութիւններ, որոնք կսուավարում են վարչութիւններով. իսկ վարչութիւնը բաղկացած է անդամներից ու նախագահից որոնց, ինչպէս գիտեք, ընտրում է ընդհանուր ժողովը, իսկ ընդհանուրը ժողովը կազմում է անդամներից, որոնք, բոլորն էլ, ժողովրդական ոգի ունին, որովհետև աշխարհականների որդիք են: (Միջանգետ պիտի ասեմ, որ դրանք միակ հաստատութիւն-

ներն են, որոնք ազտա են կղերական տարրից և նը-
րանց ազդեցութիւնից. Դժբաղդաբար դրանք էլ այն
վաս կողմը ունին, որ ընդունում են լեռտագէմ անդամ-
ներ, որոնց հետ երբեմն ստիպուած ենք լինում ընդ-
հարուիլ):

Ահա, այս բոլոր տեղերն ու հաստատութիւններն,
որոնք ժողովրդական ոգու արտագրութիւններ են, կազ-
մում են գատուկ թղթակցից գործունէութեան առաջ-
բէզը:

Ցիշածս դրօշակը ձեռքիս և բառարանը կռանս-
տակ ես մտնում եմ ալդ ասպարէզներից մը կամենում
եմ. որովհետեւ իմ առաջ բաց է ամեն դուռ, եկեղեցնեւ
լինի ալդ, թէ դպրոցի, առաջնորդարանի լինի՝ թէ բա-
րեգործական ընկերութեան, միւնոյն է. ամեն տեղ էլ
ես մտնում ազատօրէն, ինչպէս որ կըմտնէի իմ հօր-
տունը կամ իմ պապի բաղչէն:

Առաջին անգամ որ կոխում եմ դրան շէմքը, մի-
թեթև հազում եմ: Ներկայ եղողներն իսկոյն նայում
են ներս մտնողին և զգաստ գիրք ստանում: Ալդ ժա-
մանակ արդէն ես գլխարկս հանում եմ: Իբրև ծալրա-
հեղ յառաջիմական, ես ալդ անում եմ մի քանի քայլ
դահլիճում առաջ գնալուց յետոյ: (Ցետադիմականներն,
ընդհակառակը, գլխարկներն հանում են նախասենեա-
կում, որ նշան է նրանց երկչոտ և նուաստոգի լինե-
լուն): Իսկոյն մի խուլ շշուկ տարածւում է ժողովա-
կանների մշջ: Լսում են հարցեր. «Ո՞վ է սա», և պա-
տասխաններ՝ «Հնձուորի թղթակիցը», կամ «պարոն-
թակօն»:

Ես, ի հարկէ, այդ վարկիննին գիմում եմ գէպի-
իմ աթոռը գլուխս վեր բռնած, կուրծքս գուրս ցցած-
և կարելւոյն չափ սիգաճեմ: Զգում եմ որ նախագահն-
ու վարչութեան անդամները հետևելով իմ քայլերին-
կամենում են ինձ ողջուներ Բայց ես անցնում եմ ա-
ռանց նրանց նախելու, լուռ և իբր թէ՛ մտախոհ:

Նստում եմ, վերջապէս ցատուկ թղթակցից աթու-
ռին: Եւ թէպէտ չըգիտեմ թէ ինձանից տուած ինչ են-
խօսել, կամ ինչ հարցեր շօշափել, այսուամենայնիւ,
տեսնելով որ շատերը մատերնին բարձրացրած՝ խօսք
են ուզում նախագահից, ես էլ բարձրացնում եմ ցու-
ցամատս, որպէս զի հասկացնեմ ժողովին թէ՝ «մենք
էլ ալսանդ ենք»:

Նախագահն իսկոյն գլխով է անում, որ կընշանա-
կէ թէ՝ «ձեր խոնարհ ծառան եմ», ես սպասում եմ:

Այդ միջոցին խօսողը մի պահպանողական է։ բայց
ես նրան չեմ լսում. որովհետև իրաւունք չունիմ լսե-
լու: Գուցէ նո խօսում է լաւ բաներ. գուցէ շատ էլ
խելօք մարդ է։ բայց քանի որ պահպանողական է, այդ
արդէն բաւական է որ ես համոզուեմ թէ՝ նա լաւ բան-
ասել չէ կարող: Եւ հէնց այդ պատճառով էլ, բոլոր
ժոմանակ որ նո խօսում է, ես, ազատամիտ մարդուն
վայել անհամբերութեամբ, ծամաճուութիւններ եմ ու-
նում, որով բոլոր դահլիճն հասկանում է որ Յակօն դէմ
խօսողին: Այդքանն արդէն բաւական է որ ճառախօսը
ոչ մի սպիտակ քուէ չստանալ, եթէ յաւակնութիւն է
ունենալու իւր տուփը դնելու:

Ա՛յ, ուրիշ բան է յաջորդ ճառախօսը. նա ազա-
տամիտ ծաճուուեանն է: Եւ չընալելով որ չըգիտեմ թէ
ինչ պիտի խօսի, ալսուամենայնիւ, ես լիովին հագա-
ձալն եմ նրա հետ: Որովհետև հաստատ գիտեմ թէ
ինչ էլ որ խօսի, յարմար պիտի լինի մեր ուղղութեա-
նը: Մի փոքր անցնում է թէ չէ, գուշակութիւնո կա-
տարւում է։ նա յալտնում է հրաշալի մտքեր. ամենն
էլ յառաջագիմական. ես նրան ծափահարում եմ. ինձ
ձայնակցում են մեր ընտիր համախոհները:

Շուտով հերթը հասնում է ինձ, թէպէտ ես ալդ-
պէս շուտ չէի սպասում... բայց որովհետև նախագահը
մեր բանակից է, ուստի կուսակցական քաղաքական և

Թեան էտիկէտը պահպանելով, ինձանից առաջ ձայն խնդրողներին նա թողնում է անուշադիր և սիրալիր ժամկետով գտանում գէպի ինձ.

—Պարոն Յակօ, ալժմ խօսքը ձերն է,

Ես, սկզբում ի հարկէ, մի փոքր շփոթւում եմ. որովհետեւ, խստովանանք լինի, խօսելու մի առանձին շնորհք չունիմ. բայց ալդ, այն վատ սովորութիւնն էլ ունիմ որ ցուցամատս բարձրացնելու միջոցին որոշած չեմ լինում թէ՛ ինչ պիտի խօսեմ. Իսկ ալժմ, քանի որ հերթը հասել է ինձ, իբրև ցատուկ թղթակից» պէտք է արժանապատւութիւնս բարձր պահեմ. ուստի քոլորովին ինձ ըլկորցնելով՝ բարձրանում եմ աթոռից և մի բարձրայօն հայեացք ձգելով ժողովականների վը. բայ, պարզ և մեկին արտասանում եմ հետեւեալ համառօտ՝ բայց բազմաբովանդակ ճառը.

—Պարոն, նախագահ պատիւ ունիմ լայտնելու լարգելի հանդիսականներին թէ՛ ես, իսկապէս, կամենում էի ասել այն, ինչ որ պարոն ծաճուռեանն ասաց. ես լիովին համաձայն եմ պարոնի լայտնուծ մտքերի և կարծիքների հետ:

Այս խօսքերը խոր տպաւորութիւն են անում ժողովի վրայ:

Դուք հիմա կասէք թէ՛ ցատուկ թղթակցին» չի վայելիլ ալդքան համառօտախօս լինել. Ես էլ կըպատասխանեմ որ սիրալում էք: Յատուկ թղթակիցը իսկի պարտաւորութիւն էլ չունի խօսալու: Ով ուզում է թող խօսի. ճառեր արտասանէ, ընտրութիւններ կատարէ. այսուամենալինիւ, ալդ բոլոր խօսքերի, ճառերի և ընտըռութիւնների նկատմամբ հրապարակով վերշին կարծիք լայտնելը մեղ է պատկանում,

Եթէ ճախախօսը «մեր մարդն» է, ես նրա լայտնած մտքերն ու կարծիքները. «Հնձուորում» անուանում եմ «բարձր, վասմ և գաղափարական». եթէ հակառա-

կորդ է, տսում եմ. «Յետագիմականին մէկը այս ինչ ժողովում լայտնեց անդրջրհեղեղեան, բորբոսնած մտքեր»:
Եթէ ժողովի ընտրութիւնները կատարւում են համաձայն մեր ցանկութեան, այն ժամանակ ես լայտ-նում եմ թէ՝ «այս ինչ ընդհանուր ժողովը կալացաւ ամենայն օրինաւորութեամբ և ընտրութեան արդիւնքը եղաւ փալլուն որովհետև ընտրուեցան միայն լառաջադիմականներ», Բայց եթէ դրանց մէջ ներս է ընկնում մի պահապանողական, այն ժամանակ արդէն ասում եմ. «Թէսկէտ ժողովը կանոնաւոր եղաւ, բայց վերջում խաւարամիտները քուէները խարդախելով և մի քանի ժողովականների միամտութիւնը շահագործելով՝ ընտրել տուին իրենցից մինին»:

Պատահում է, ի հարկէ, և ժողով, ուր բոլոր ընտրուածները լինում են պահպանողականներ։ (Ալդպիսի գիրազդութիւն հասել է հայոց ազգին մի քանի տամամ): Եւ ահա այդպիսի ժամանակ ես այլ ևս չեմ քաշւում զուտ ճշմարտութիւնը լայտնելու. ժողովն, ուղղակի, լայտարարում եմ «ապօրինի», ընտրութիւնները՝ «անվատեր», իսկ ժողովատեղը՝ «Արշակաւան»:

Այս եղանակով ես գործում և ճշմարտութիւնը լայտնում եմ, նաև, պատգամաւորական, հոգաբարձական և երեցփոխանական ընտրութիւնների վերաբերմամբ։

Եթէ պատգամաւորը «մերոնցից» է, ես նրան ուղղակի անուանում եմ «սուրբ գործի համար իւր անձն ու հոգին նուիրող»։ Եթէ «մերոնցից» չէ, տալիս եմ նրան իւր սեփական անունը, այն է՝ «պնակալէզ և ստրկահոգի կղերական»։

Եթէ հոգաբարձուն «մեր բանակիցն» է, ես չեմ ծածկում նրա արժանիքը. լայտնում եմ որ դա «ազնիւու ազատ գաղափարներսով տոգորուած, դպրոցի լառաջագիմութեան նախանձախնդիր և հանճարաւոր ուղեղի տէր մէկն է»։ Բայց եթէ «հակառակ բանակիցն է, նրա

թերութիւնները պարզ է. նա ռկաշառակեր է, անբարյական և մաթուսաղալի ժամանակակից գաղափարներով սնուածու:

Եթէ երէցիովը «մեր մարդն» է, ես նրա նկատմամբ կատարում եմ իմ պարտքը, լոլտորաբելով նրան և անբիծ, անշահտութիւն իւր անձը նուիրողը. իսկ եթէ «մեր մարդը չէ», այն ժամանակ, ինչ ասել կուզի, որ քաղաքացիական քաջութիւն պիտի ունենամ անուանելու նրան «զող, աւազուկ, եկեղեցու զոլքը լափշակող» և այն ըստ կարգին:

Գալով վարժապետներին, տեսչին, աւազնորդիննեն, դրանց գործունէութեան նկատմամբ ևս ես հետեւում եմ մի և նոյն հաստատուն ուղղութեան մնութով միշտ ազատասէր, ճշմարտախօս, մերկացնող, հրուածող. մտրակող, միով բանիւ զտարիւն «Հնձւորական»:

Ոյս էլ պիտի ասեմ որ պատուկ թղթակցի» գործունէութիւնը չի սահմանափակում միտին ազգային հաստատութիւնների մասին գրելով: Ոչ գաւառական քաղաքում ուրիշ բաններ էլ կան, որոնցով մենք հետաքրքրում ենք լրտգրի ընթերցաններին: Կալ, օրինակ, քաղաքագլուխ, կան վարչութեան անդամներ, ինքնավարական իրաւունք, լետոյ՝ քաղաքի մաքրութեան, բարեկեցութեան և առողջապահութեան վերաբերեալ խնդիրներ. կան կապալուռներ, վաշխառուներ, վաճառականներ և այլն: Այդ բոլորի մասին նոյնպէս ես իրաւունք ունիմ գրելու եւ գրում եմ, ի հարկէ, այն, ինչ որ կամենում եմ, կամ ինչ որ պահանջում է կուսակցութիւնից անբաժան իմ անհատական շահը:

Կար ժամանակ, երբ թղթակիցներից պահանջում էր շատ քիչ բան. այն է լինել լոկ արձանագրող որ և է գործի կամ դեպքի: Ոյդ նահապետական ժամանակի թղթակիցը կարող էր ուրեմն, լինել և սահմանափակը:

ժմելքի ու զարգացման տէր մէկը, և նա, յամենայն գէպս, կըդոհացնէր իւր ընթերցողներին։ Բայց ալժմ ալդպէս չէ։ Այս օրից որ հայ ազգի կեանքը բարդացաւ և նրա մէջ ծնունդ տռին ազատամուական, յառաջադիմական և մտրակողական ուղղութիւններն, այն օրից որ լոյս աշխարհ հանուեցան խաւարում ծածկուած պահպանողականները, յետադիմտկանները և կղերականները, մերկացնող ուղղութեան հետևող խմբագրութիւններն ալլ ևս չեն բաւականանում հասարակ տեսակի ժղթակցութիւններով։ Նրանք պահանջում են որ ցատուկ թղթակիցնա ունենալ ոչ միայն արձանագրելու, ալլ և յօրինելու ու ստեղծագործելու ձիրք, որ նա կարողանալ որ և է անձի գնտած ձիւնը գլորել ու ժաւալել այնքան, որ սա մեծանայ, վիթխարի ձև ստանալ և տեսնողների վրայ ահ ու ստրսափ բերէ։ Կամ, ընդհակառակը, եթէ մէկը պատահմամբ շինել է մի մեծ գունդ, հալէ ու մաշէ նրան այնքան, որ տեղը մնալ աննշան մի գնտիկ։

Եւ հենց ալս պատճառով էլ, եթէ առաջ խմբագիրն այնքան երկչոտ ու ամօթխած էր՝ որ իւր լրագրում որ և է անձիշդ լուր տպուած ժամանակ շտապում էր՝ հակառակ կողմից հասած հերքումը խսկոյն տպագրելու, ալժմ, ընդհակառակը, խմբագիրն ունի այնքան կօրով ու քաջութիւն որ ոչ միայն հզօր պաշտպանութիւն է ցոյց տալիս իւր թղթակցին և յամառութեամբ նրա հազորդած անձշութիւնների վրայ պնդում, ալլ և թղթակցի վարկը ժողովրդի աչքում բարձրացնելու համար, ալդ անձշութիւնների վրայ հիմնուած՝ առաջնորդներ է գրում և իւր խօսքը աւելի ազդու անելու համար՝ թղթակցի սուտերից վկալութիւններ բերում։

Ճշմարիտ է, գաւառական քաղաքում գործի խոկութեան ծանօթ մի քանի մարդիկ վրդովւում, են և

հալհոյում սխալ տեղեկութիւններ հաղորդաղ թղթակւցին. բայց դրանից բնչ դուրս կըգայ. հօ միւս քաղաքներում տասնեակ՝ հազարաւոր մարդիկ կարդում են մեր հաղորդածը և ընդունում նրանց զուտ ճշմարտութեան տեղ:

Տասը-քսան մարդ ճշմարտութիւնը իմանալով բնչ կարսղ են սնել, քանի որ նրանց ձայնը չի յսուելու հրապարակում, քանի որ նրանց հերքումը չի տալուելու լրագրում։ Տասնեակ հազարաւոր մարդիկ մեր շնորհիւ արդէն սելի՛ն ա. ել են սպիտակ և ալդ բաւտկանէ, ձախ բազմաց՝ ձայն Աստուծոյ:

Հանգամանքների տլսպիսի բարեբազդ փոփոխութեան շնորհիւ է որ մենք ալսօր ոչ միայն մեծ յարդու պատիւ ենք վայելում ժողովրդից, ալլ և կարողանում ենք լեղափոխութիւններ առաջացնել նրա լճացած ու բորբոսնած կեանքի մէջ,

Ցիշենք մի օրինակ

Քսան տարի սրանից առաջ մի անհեղեղ կարգադրութիւն եղաւ. Նրամայել էին որ մեր դպրոցների աշխարհական հոգաբարձուների թւում ընտրուին, նաև, երկ-երկու քահանաներ, որոնք, ինչպէս գիտէք, զուտ կղերականներ են. Այս կարգագրութիւնը, ինչպէս որ սպասելի էր, յուզեց ու վրդովեց ողջ ազատամիտ աշխարհը.

— «Ո՞նց թէ հոգեոր դպրոցների մէջ մուտ գործէ հոգեորականը. այս բնչ խաւարամտութիւն է, հարցը ըինք մենք իրար՝ լցուած արդար բարկութեամբ։

Բանից երևաց որ ալդ կարգագրութիւնը արել է Հայոց Հոգեոր ծէրը։

Մենք զարմացանք։

«Հայոց Հոգեոր Տէրն բնչ-գործ ունի մեր հոգեւոր դպրոցների հետ, հարցնում էինք իրար յուռ փսփսալով և սակայն ալդ հարցին պատասխան չէինք գտնում։

Յանկարծ բարեկամներիցս մէկը մի զարմանալի միտք լալտնեց.

— Հայոց հոգեոր տէրը, ասաց նա, երևի, այն կարծիքի է թէ՝ քահանաները ևս հայեր են, իսկ նրանց որդիքը, որ փարաշալ չեն հագնում, աշխարհականներ։ Նետեսալէս, ինչպէս որ կտակակար Մակին, կամ բազով Սերոբը աշխարհական լինելով՝ իրաւունք ունին հոգաբարձու լնտրուելու, և իրենց որդւոց շահերը դպրոցում պաշտպանելու, այնպէս էլ քահանան՝ հայ անուանելով իրեն՝ պիտի խառնուի հոգեոր դպրոցի գործերում, առարկելով թէ՝ պաշտպանում է այդտեղ իւր աշխարհական որդու շահերը։

— Ոչ, ալդպէս չէ, լարեց մի ուրիշը, որովհետեւ մենք, աշխարհականներս ամեն կերպ խառնում ենք եկեղեցու գործերում՝ առարկելով թէ՝ մեր եկեղեցին ժողովրդական է, ահա հոգեոր տէրն էլ քահանաներին խառնում է մեր հոգաբարձուների հետ՝ որպէս զի մի օր ասէ թէ՝ ձեր դպրոցներն էլ հոգեւորական են։

Այս տարօրինակ, բայց կարի հաւանական բացատրութիւններն ուղեղս ցնցեցին։ Սկսալ մտածել թէ՝ ինչ միջոց գործ դնենք ծնունդ առած չարիքն արմատախիլ անելու։

Եւ ահա լանկարծ գլխումս ծագեց մի հրաշովի միտք, որը ես գարձեալ վերագրեցի Մուսանների ազդեցութեան։ (Միջանկեալ պիտի ասեմ որ վերջին ժամանակներս Մուսանները շուտ շուտ են երևում մեր երկրում։ Ասում են բանաստեղծ Յովհաննէս Թումանեանն էլ ջրի Վտակում մի Մուսա է բռնլ։ Բայց խաւարամիտ լետադիմականը փոխանակ նրանից շնորհ խնդրելու, փող է ուղել։ Մուսան էլ վասա փուսան հաւաքել, փախել է։ Հա, այն էի ասում. գլխումս մի հրաշալի միտք ծագեց։ — Կղերական կուսակցութիւնից և նրա աղդեցութիւնից ընդ միշտ աղատուելու համար

ավետք է հեռացնենք եկեղեցիներից բոլոր քահանաներին, իբրև հալ ազգին չըպատկանող մի տարրի — մտածեցի ես:

Եւ երբ այս մտաին հետեւալ օրը լալտնեցի պատգամաւորների նախապատը սստ սկան ժողովում, բոլոր յառաջադիմականները միանուագ ծափահարեցին, Բայց յետադիմականները սկսան ծիծողելու Եւ զարմանալի էլ չէր: Ալդ մարդիկ չեն կարող որևէ նոր ու թարմ միտք ըմբռնել ու մարսել. Նրանց հետաքրքրում է միայն հինը ու փտածը: Ալդ պատճառով էլ խաւորասէրներից մէկը հետևեալ տղայ սկսն գիտողութիւնն արու.

— Հազար այն ժամանակ ով մեզ համար ժամ ասէ, ով մեր երեխան մկրտէ, պսակը կատարէ, մեռելը թաղէ: Արևը սիրեմ ծառուռեանին, վեր թռաւ տեղից գրակի պէս ու պատասխանեց:

— Դրա համար Ամիրխանեան կայ. բաւական է քսանել այսօր մի հեռագիր և վաղը պատրաստ կլինին ալսատեղ մի քանի տասնեակ պաստօրներ, բոլորն էլ բրիւ. Կով ու ժիշտով:

Յետադիմականն, ի հարկէ, իսկոյն պատանձուեց: Բայց և այնպէս իմ առաջարկութիւնը չընդունուեց, որովհետեւ խաւարամիաները քուէները խարդախեցին: Այսուամենայնիւ, կղերականներից ազատուելու համար, մենք գործ դրինք աւելի ազգու և դրական միջոց: Մի երեկոյ հաւաքեցինք քաղաքի քահանաներին սերտունը և ասացինք.

Տէր-պապաներ, գուք ստամոքս ունիք թէ ոչ ասացին Ունինք:

— Դուք սիրում էք թաժա հաց, իւղալի բողբաշ, անուշահոտ տոլմա, կամ դառւրմազ փլաւ. ասացին:

— Եատ ենք սիրում:

— Դուք կարող էք տկլոր ման գալ ձմեռ ժամանակ, կամ սենեակներդ չըվառել երբ բուքն ու բորա-

Նը սառեցնում լինի դրսում ամեն կենդանի շունչ:

— Ոչ, ասացին, չենք կարող տկոր ժամանակ մեք հարկաւոր է լաւ քաթանից շապիկ ու շապկի ընկեր. հաստ գուլբա և պօլսապօժկա. լետոյ դրաբի շալվար և արխալուզ, վերջը մի կապա, մի փարաշալ, մէկ էր մի վերարկու—փարաշալ, այդ բոլորից լետոյ էլ մանիշակագոյն թաւշից մի կամիլաւկար: Իսկ եթէ դրան արժանացած չըլինինք, այն ժամանակ Հարիքի կաստօրից մի լաւ շլեշապա: Գալով մեր սենեակները տաքացնելուն, դրա համար էլ հարկաւոր է չորս խորանարդ սաժեն իսկական բոխի ծառի փալտ:

— Ոէ, լոյս դառնալ ձեր հերը, ասացինք մենք, հիմա լսեցէք. Եթէ չէք ուզում որ թաժա հացը, ըողբաշը, տօլման, ղառւրմով փլաւը, կամ վարդագոյն իշխան ձուկն անպակաս լինին ձեր սեղանից, եթէ չէք ուզում տկլոր ու չփլախ ման գալ փողոցում, կամ ձըմեռ ժամանակ ցըտից գոնգոռնալ, այն ժամանակ պէտք է քիթներդ չերևեցնէք հոգաբարձուներ ընտրող կազուալ ժողովի մէջ: Հակառակ գէպքում, մենք ձեր ծըխակաները չենք, դուք էլ մեր քահանաները:

Հարուածը ուղղուած էր վէրքին. քահանաները մնացին սառած:

Մէկը միայն առաջ անցաւ և մեր գութը շարժելու համար՝ իւր ընկերների կողմից հետևեալ սրտառուչքանախօսութիւնն արաւ.

— Ո՞վ երջանիկ աշխարհականներ. եղել է ժամանակ, երբ քահանաներն այնքան անշահասէր, պարտաճանաչ և առաքինի են եղել որ մի ճշմարտութիւն քարոզելու, կամ պաշտպանելու համար, նոյն իսկ, իրենց անձն են զոհել, նահատակուել են: Բայց այդ եղել է այն ժամանակ, երբ նրանք ապրում էին ոչ թէ «հացիւ», ալլ «բանիւն Աստուծոյ». այսօր, ի հարկէ, ալդպինի քահանաներ չըկան, եղածները մենք ենք. իսկ մե-

զանից ամեն մինք, ինչպէս գիտէք, ունի մի ջուալի չափ ստամոքս, որն անհնար է լցնել գրանիւն Աստուծուցու։ Այդ պատճառով մենք սիրով ընդունում ենք ձեր առաջարկութիւնը՝ Թող խաւարամիտ էմին տէր Գրեգորեանը մեզ այս առիթով անուանէ հացկատակ, թող ուրիշ յետադիմականներն էլ անուանեն, թէկուզ, պղուտագոյծ, ալնակալէզ, մեզ համար միւնոյն է, միայն թէ մենք չըզրկուինք անուշահոտ տոլմից, զառւրմով փլաւից և, մանաւանդ, Աւանի իշխան ձուկից, որն ամեն տնգամ վալելելուց՝ մարդ լցւում է հայրենասիրական կրակով... Այս, թող մեզ անուանեն ինչ ուզում են, միայն թէ անպակաս ունենանք լիշեալ բարիքները, մեր ներքին ու արտաքին փարաջաները և ձմեռ ժամանակ՝ բոխու փալտով տաքացրած մեր սենեակներն, ուր տիրակնոջ կողքին հանգիստ նստած, խօսինք աշխարհի ունայնութեան մասին, կամ ողերուած ժամանակ՝ «զան» ասենք «զան» լսենք։

«Հայոց հոգեսոր դպրոցում, զարունակում էր Տէր հայրը, աշխարհական լինի հոգաբարձուն թէ հոգեսորական, դպրոցը լինէ, թէ լինի, մեզ համար միւնոյն է. մեզ հարկաւոր են երեխաներ, որ մկրտենք, երետասարդներ՝ որ պսակենք և մեռելներ՝ որ թաղենք։ Այս երեք քանը մեզ տուէք, իսկ մնացեալը, թէկուզ, ջուրն ածեցէք, մեզ բնչ։

«Այս գիտումներով, ահա, մենք ընդունում ենք ձեր առաջարկութիւնն և հանդիսաբար խոստանում որ քիթներս չենք երեցնիլ հոգաբարձու ընտրող ժողովի մէջ, որպէս զի աշխարհի առաջ ապացուցանենք թէ՝ մենք ենք «հովիւ քաջ»։ որ զանձն իւր գնէ ի վերալ ոչխարաց։

Քահանաների ալս անձնուէր որոշումից զգացուած, ես մի մի պունչ առաջարկեցի նրանց։ Ցետոյ իրաւունք առնելով նրանցից՝ խօսել իրենց փոխարէն ժողովում,

ինչ որ կամենանք, ճանապարհ դրինք նրանց տիրով և խաղաղութեամբ:

Հետեւեալ օրը հանդիսաւոր գեկուցումն արի պատգամաւորների ժողովում, յալտանելով թէ՛ մեր քահանաները, կամենալով հաւատարիմ մնալ հայոց եկեղեցու ժողովրդական ոգում, խմբովին հրաժարում են Հոգեւոր իշխանութեան հրամանը կատարելուց, ուրեմն և մեր կամքի հակառակ հոգաբարձու ընտրուելուց, որով և արժանաւոր ապտակ են տալիս ում որ անկէ, հասկացնելու համար թէ՛ չըպէտք է ամբոխի իրաւունքները բոնաբարել:

Այս նորութիւնը, որ յառաջադիմականները լսեցին հիտցմունքով, իսկ յետադիմականները զալրոյթով, մի շաբաթից յետու հրատարակուեց «Հնձուրում», իբրև հայ քահանաների ճշմարտասիրութեան, ազնւութեան և անօրինակ անձնուիրութեան ապացուց, որի նկատմամբ խմբագրութիւնը ևս իւր կողմից գրեց մի փարլուն առաջնորդող, անուանելով արդ քահանաներին «ազնւութեան տիւլարներ»:

Այս միջանկեալ պատմութիւնը ես արի, ցոյց տալու համար թէ՛ բնչպէս ենք մենք լեղափոխութիւններ առաջացնում գաւառացու լճացած ու բորբոսնած կեանքում: Եւ այս պատճառով է, ահա, որ մեզ ամեն տեղ հանդիսղում են սիրով, ակնածութեամբ և յաճախնոյն իսկ, երկիւղով: Մեր խօսքը գաւառում, գրեթէ, պատդամ է, իսկ ցանկութիւնը՝ օրէնք:

Ե.

Նիմա դուք, իբրև դրական հայեր, կամէք թէ՛ բոլոր աշխարհը գործում է շահի համար, մարդիկ վաստակում, կամ քրտնում են որոշ չօգուտներ ձեռք բերելու համար, արդ, ձեր շահն ու օգուտը ո՞րն է այս

գործում. ինչու էք ի զուր աշխարհն աղմկում, սրտեր վիրաւորում, մտքեր պղտորում, մարդկանց հանգիստը խանդարում»:

Այդ հարցերին մենք ունենք մի պատասխան. այդ այն է՝ որ գիտենաք թէ՝ մենք ել մարդ ենք այսինքն շահ ասուած բանի համար մենք ել մտածում ենք, ուրեմն, մուֆտայ չենք ազգասիրութիւն պնում։

Իմ գործունէութեան առաջին տարիներում, իմ ստացած շահը լինում էր միայն բարոյական. արսինքն, ես գոհ էի լինում որ իմ անունը տպում էր աշխարհահոչակ «Հնձուսրում», որ ես համարւում էի ցատուկ թղթակից և որ վերջապէս հայոց ազգն իմանում էր թէ՝ երկրագնդի վրա ապրում է «Յակօն»։ Բայց յետոյ, քանի ժողովրդական դարձալ և «ձիւնի գնդակներըն» սկսալ աւելի մեծ մեծ գլորել, նիւթական շահեր էլ էի ստանում։ Օրինակ. պատահում էր որ Տէր Մաղքոսը գալիս էր Զրօրհնէքին, կամ Զատկին մեր տունն օրհնելու։ Նա փող չէր առնում, վախենալով թէ՝ մի գուցէ այդ մասին գրեմ լրագրում։ Պատահում էր որ ես ներկալ էի լինում մի բարեկամի տղայի մկրտութեան կամ աղջկալ թաղման, այդ բարեկամն էլ, իմ շնորհիւ, ազատուում էր ծախքից։ Զատկի մատաղի օրը երէցիոնանը մեր տուն դրկել էր տալիս 10 թիքալ, ամենաշաւ կտորներից, մինչդեռ ըստ օրինի՝ մեզ կըհասնէլ 2-ը կամ 3-ը։ Հոգաբարձուներից մի քանիսը միշտ հաճութեամբ էին լսում ինձ, և երբ իմ մօրաքրոջ որդու համար հարկաւոր եղաւ ուսուցչական պաշտօն, նրան իսկոյն տեղաւորեցին մեր դպրոցում։ Այդպէս էլ պատահում էր և այն աշակերտներին, որոնք բաղդ էին ունենում իմ ազգականները լինելու։ Նոյն իսկ առաջնորդը, պէտք է խոստովանել, բարեհաճ էր զէպի ինձ։ Նա սիրով հաս արաւ իմ հօրեղբօր որդու պատկը, որ չըհաս էր ազգակցութեան 5-րդ սստիճանում։

Բայց ալս ազգային բարիքներից զստ ես վայեցում եմ, նաև, քաղաքացիական բարիքներ։ Օրինակ — մեր տան փողոցը միշտ մաքուր է պահուում, մինչդեռ մի քիչ հեռու, մի լետադիմականի տան առաջ, կատարեալ աղքակոյտ է։ Այս պատճառով ես պարտքս եմ համարում հրապուրակաւ լայտնել որ մեր քաղաքը օրինակելի մաքուր է։ — Քաղաքային վարչութեան մէջ երկու ազգակիցներս լաւ պաշտօն ունին. պարզ է, ուրեմն, որ ես ալդտեղ չեմ կարող երբէք զեղծում նշմարել. — Գնահատող մասնաժողովն, որ հօրս կենդանութեան ժամանակ մեր տան հարկը որոշել էր 7 ր. 50 կ. ալժմ այդ հարկը իշեցրել է մինչև 3 ր. 25 կապ.։ Խնչպէս ըրլալտնեմ աշխարհին որ այդ մասնաժողովը գործում է բարեխզարարութեան մի վաշխառու, որի համար գրել էի թէ տղուկի պէս ծծում է գիւղացիների արիւնը, ալժմ ինձ պարտք է տալիս առանց տոկոսի և երբ ժամանակը լրանում է, սիրով փոխում է իմ մուրհակը, դարձեալ տոկոս չըհաշուելով։ Ալժմ իմ պարտքն է նրա մասին ալլ ևս վատ ոչինչ չըզգել։ — Մինչև անգամ բախալ համբարձումը, որի մասին գրած էի թէ՝ փատած կամ բակ միրգ է ծախում և խոլերայի տարածման նպաստում, սովորութիւն է արել ամեն կիւրակէ ինձ նուէրներ դրկելու, երբեմն լաւ ծիրան, երբեմն բեղանալ թութ, իւր ժամանակին խաղող, դեղձ, թուզ, ընտիր սեխ և ալլ։ Մի անգամ բարեկամներից մէկը կատակով հարցրել էր թէ «Համբարձում ապեր», ինչու Յակօհին նուէրներ ես ուղարկում, իսկ ինձ ո՛չ։ Նա պատասխանել էր.

— Յակօի բանն ուրիշ ա. շուն ենք կապում……

Ես, ի հարկէ, չըբարկացալ տգէտ մարդ է, աւելի լաւ պատասխան տալ չէր կարող։

Բայց, ճշմարիտն ասած՝ զայրութս զսպել չեմ կարողանում, երբ նման վիրաւորանքներն ստանում եմ

ինտելիգենտ մարդուց։ Օրինակ, անցեալները խօսում էր ինձ հետ մի հեռու ազգականս, որ, գլուխը մեռած համալսարանական է և, միենոյն ժամանակ, չե ամա չում իրեն պահպանողական անուանելու։ Գրգռուած այն լաջողութիւնից, որ ցատուկ թղթակիցներս ունինք և այն լարդանքից, որ մենք վայելում ենք գաւառում, նա հետեւեալ անհեղեղ համեմատութիւնն արաւ։

— Դուք շատ նման եք, ասաց, այն պատմական եասաւուլբաշիներին, որոնք ապրում էին տիրահռչակ Մովրովների ժամանակ։ Զեր թէ ունեցած լաջողութիւնը և թէ վայելած լարդանքը նոյնն է, ինչ որ ունէին կամ վայելում էին նրանք։ Ամեն մի դէպք, կամ լանցանք, որ կատարում էր ժողովրդի մէջ, ամենից առաջ ծառայում էր այդ եասաւուլբաշիների օգտին։ Նրանք ունէին սուր հոտառութիւն և գիտէին թէ՝ որ դէպքից կարելի է որոշ օգուտ քաղել և որից ոչ։ Այդ պատճառով անցքի տեղը ամենից առաջ հասնում էին նըրանք, իբրև կարգապահութեան հսկող պաշտօնեաներ։ Եթէ լանցաւորը մի երեքանոց, կամ հնդանոց սլացնում էր եասաւուլ բաշի նաւասարդի ձեռքը, այն ժամանակ կատարուած իրողութիւնը, կամ ծածկում էր բոլորովին, կամ ներկայացում էր իբրև մի անմեղ իրողութիւն։ Խսկ եթէ ոչ, այդ դէպքում եասաւուլ բաշին բարձրագոչ սղաղակով և հեղինակսւոր հալհուանքներով կատարուած լանցանքը լայտարարում էր իբրև մեծ եղեռնագործութիւն և լայտնելով այդ մասին Մովրովի օգնականին, հրաման էր ստանում՝ մտրակելով բերել իւր դուռը անհանդիստ լանցաւորին։ Այստեղ արդէն, արդարութիւն գտնելու համար, հարկաւոր էր սլացնել ոչ թէ նաւասարդի արած պահսնջի չսփ, այլ տասն անգամ աւելի, որպէս զի գործը չըհասնէր Մովրովին, որի արդար գատաստանից խուսափելու համար

կըհարկուորուէին հարիւրներ և այն՝ ոսկեդրամով, ինչ-պէս վիստասան Պոռշեանն է վկալում իւր «Հացի խնդրում»:

Յատուկ թղթակիցներին նմանեցնելով եասաւուլ բաշիների, խաւարամիտ ազգականս այն բարբարոս միտքն էր յալտնում, իբր թէ՛ մենք էլ նրանց եղանակով հարստահարում ենք ժողովրդին, կաշառ ենք տոնում նրանից կամ երեսպաշտութիւն անում։ Մեծ բարտաւորութիւն է որ ալդ ապուշը չի հրատարակել այս կարծիքը պարբերական թերթերում. ապա թէ ոչ, հայ ընթերցողներն, որոնք մեծ մասամբ բթամիտ են լինում, հալած իւղի տեղ կընդունէին ալդ բարբանջանքը։

Բայց ես, որպէս զի ապացուցանէի իմ ծանծաղամիտ ազգակցին թէ՛ իբրև թղթակից, ո՞րքան անաչառեմ, ասացի.

— Մեր ու ետսաւուլ բաշիների մէջ, արդարն, կալ նմանութիւն, բայց ալդ նմանութիւնը ոչ թէ դրական, այլ հակադրական է. օրինակ. նշանք հսկում էին քաղաքի տրտաքին կարգութահութեան, իսկ մենք հըսկում ենք՝ ներքինին; Նրանք օգտաւում էին մարդկանցից նիւթապէս, իսկ մենք՝ օգտաւում ենք բարոյապէս։ Նրանց յարգում էր ժողովուրդը իբրև փոքրագոյն չարեքի, իսկ մեզ՝ յարգում է իբրև փոքրագոյն բարեքի։ Նրանք ծածկում էին ճշմարտութիւնը, երբ շահ էին ունենում և յայտնում՝ երբ չէին ունենում, իսկ մենք՝ ընդհակառակը, յայտնում ենք, երբ շահ չենք ունենում և ծածկում՝ երբ ունենում ենք։ Նրանք մտրակում էին անհանգիստ մարդկանց, իսկ մենք՝ մտրակում ենք իսկստ հանգիստներին։ Նրանք հալհոլում էին լեզուով, իսկ մենք՝ հալհոլում ենք գրչով. միով բանիւ, նմանութիւն կալ, բայց ալդ նմանութիւնը բացասական, հետեւապէս, և բարոյական է։

Մի վերջին, հակադիր նմանութիւն ևս, որ չեմ կարող զանց առնել, այն է՝ որ եասաւուլ բաշիների, կամ մովլովների անունն անմահացնողը եղել է մի խառարամիտ Պռօշեան, իսկ մերը պիտի անմահացնէ մի ազատամիտ լառաջադիմական:

Ալսքանը, կարծեմ, բաւական է, հասկացնելու համար թէ՝ ով ենք մենք:

ՄԱՆՐԱՎԱՆ